Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1629-1634

1908 17 \ 8 (5)
3пр-68

Y5-4 W67

ԱՍՊԱՐ ԿԵՆԱՑ

ԿԱՄ

ԳԱՂՏՆԻՔ

ՀԵՏՏԱԿԱՆ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՍՆ ԱՆԳԱՄԱՀՆՆԱԿԱՆ ԳԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՌԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

1874

613.96

ԱՍՊԱՐ ԿԵՆԱՑ

ԿԱՄ

ԳԱՂՏՆԻՔ

ՀԵՐՏԱԿԱՆ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԳՈՐԾ Ժ.

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Յ ՊԱՐՈՆԵԱՆ
—1874—

9094

736
40

ԵՊԱՏԱԿ

Տկար գրչովս 1872 ին գրական ասպարէզն ելայ։ Հայ գրականութիւնը քանի մի նոր հեղինակութիւններով հարստացնելու համար չէր որ ես առաջին անգամ գրիչն ձեռքս առի, զի այս մասին կարծեմ թէ ընթերցողներէն առաւել ես գիտեմ իմ անկարողութիւնս. ներքին պարտաւորիչ ձայն մը զիս ըստիպեց, ամեն թերութեամբս հանդերձ, ասպարէզ նետուիլ։ Սոյն ձայնը ինձ նիւթ մը տուաւ, նա էր ԿԵՆԱՆՔ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ, եւ կը հրամայէր ինձ խօսիլ եւ գրել կենաց եւ անոր պահպանութեան վրայ։ Հնազանդեցայ անոր. կենաց պահպանութեան զինուոր գրուեցայ. սա ըրի իմ նըպատակս հրապարակաւ խօսած ատենս. սա ըրի իմ գրութեանցս նիւթը. այսպէս ըրի եւ այսպէս պիտի ընեմ մինչ վերջին շունչն իմ։ «Ժողովրդական Օրացոյցներս» մեծաւ մասամբ կենաց եւ նորա պահպանութեան վրայ կը խօսին եւ պիտի խօսին. «Գաղտնիք Ամուսնութեանը» կենաց պահպանութեան մի կարեւոր ճիւղը իրեն նիւթ եւ նպատակ է ըրած. «Առողջ, երջանիկ եւ երկար կեանք» տետրը կենաց եւ նորա պահպանութեանը վրայ խիստ կարեւոր դիտելիքներ հասարակութեան կը մատակարարէ. «Անհան Տերեւներն» կենաց ամենամեծ թշնամին ցոյց տալով կեանքն անկից ազատելով պահելու միջոցներն կը սովրեցնէ, եւ այժմ ներկայ «Ազատար Կենաց» գրքոյկը կենաց վրայ յարձակող այլ քանի մը կատաղի թշնամիներն ստորագրելով կզգուշացնէ զընթերցողն անոնցմէ։

Նորէն պարտք մը կատարեցի. վերատին նըպատակի մը ծառայեցի այս գրքոյկն եւս հրատարակե-

լով, ինչպէս խոստացած էի։ (Աշնան տերեւներ երես 40)։ Սակայն հարկաւ հնար չէ ինձ ամեն անհատի կենաց պահապան զինւոր կանգնիլ։ Ուստի նա որ կղդայ կենաց յարգն ու արժէքը թող այս գրքոյկս ալ կարդալով տեսնէ իր թշնամեաց կատաղի խուժ-քըն ու լէգէոն ն եւ յարաժամ անձամբ հակէ, Կենաց Ասպարն 'ի ձեռին, որ այս ազնիւ դանձը նոցա որս չըլլայ։

30 Դեկտեմբեր 1873 Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Խասդիւղ.

ԱՍՊԱՐ ԿԵՆԱՑ

ԿԱՄ

ԳԱՂՏՆԻՔ

ՀԵՐՏԱԿԱՆ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Սեռական կեանք ըսելով ծննդական գործարանաց այն ամէն գործողութիւններն ու արարքներն հասկցնել կուզենք, որ այլ էակ մ'արտադրելու համար կամ լոկ զգացմամբ և կամ պաշտօնով մը կարտայայտին։ Այսի գիտնալէ, իբրև ուսմունք ստրեցնելէ և զանի բարեկարգ վիճակի մէջ պահելէ կախեալ է ապագայ սերնդոց երջանկութիւնը և ընդհակառակն զանի անկատ թողելէ յառաջ գան մեր ապառնի սերնդեան թշուառութիւնը։ Սա կարեւոր իրողութիւն մ'է և հին ատեններն անդամ քաղաքական և կրօնական օրէնսդրեանքներն այն խնդիրն իրենց ուշադրութեանը արժանի կէտ մը սեպած էին։ Սակայն այժմեան մարդիկ՝ որ բնութեան օրէնքը, կանոններուն և ընթացքին վրայ յանհուն առաւել գիտութիւն ունին քան մեր նախահարք, իրենց ամենամօտ և ամենակա-

բեւոր բնական ամենաքանչելի օրէնքներն զանց առնելով իրենցմէ յանհունս հեռի է. զոր առարկաներ ուշի ուշով կը զննեն. նոքա բուն իրենց մարմնոյ մէջ թաթեալ բնութեան աքանչելի գաղտնիքներն թողլով և եղծելով միլիոնաւոր մղոններ երաւակայական ճամբորդութիւններ կընեն բնութեան գաղտնիքներն լուծելու և հասկնալու համար։ Ամա՛ղ յիմարութեան։ Ամա՛ղ կուրութեան։ Եւ ճիշդ սեռական կեանքն է որ մեզի ամենազուտ և ազնիւ ու անխառն ուրախութեանց մասնակից կընէ. նա է որ մեր մէջը երջանկութեան միակ աղբիւրն, այն է սէրն, կը զարթուցանէ։ Սակայն ընդհակառակը նա մարդուս և ապագայ սերնդոց անասելի և անենարագրելի անիծից աղբիւր ալ կրնայ լինել եթէ երկնից այս պարգեւն չարաչար գործածուի։ Սա այն հուրն է, որ մարդուս առաջին և նախնական կարօտութեանց մին է. սակայն նոյն հուրն՝ անհոգութեամբ և անզգուշութեամբ կործանիչ, կիզիչ և աւերիչ հրդեհի մը կը փոխուի։ Ճիշդ այսպէս նաեւ սիրոյ հուրը, երբ անզուսպ և անսանձ բոցի մը փոխուի, մարմնոյ ծուծը կը կիզէ, կապառէ և կը լափէ, հոգւոյ վեհութիւնը անասնական անասնաձութեան կը վերածէ, և հուսկ ուրեմն կեանց լոյսն 'ի սպառ կը մարէ, մաշած, ջորցած, աւերեալ և ապականեալ, քսամնեայ և զգրաւի մարմնոյ՝ աւերակ մը միայն թողլով 'ի տակուտ մլոց։ Այս ամենը սեռական

կենաց վրայ է հիմնեալ. ուստի ո՛րքան կարեւոր է զանի մեր ուշադրութեան նիւթ ընելը. սա ինքնին յայտնի է։ Սակայն այս չէ ամենը. սեռական մի քանի գաղտնիքներն դեռ պիտի յիշենք։

Այն կեանքը չէ թէ լոկ ծննդական անդամոց վրայ ազդեցութիւն ունի, այլ մարմնոյ ամբողջ կազմութիւնը, արիւնը, միտը, ջիղերն, ուղեղն, մինչեւ իսկ հոգին, նորա իշխանութեանը տակ են. այսպէս երբ մեր մէջ թաքեալ բնութեան օրինաց դէմ մեղանչենք ոչ թէ միայն ծննդական անդամներն տուժելով կազատինք, այլ սեռական կենաց հանդէպ մարմնոյ վրայ ունեցած իշխանութեանը պատճառաւ ընդհանուր մարմինը տարապարեալ տուգանաց և պատժոյ կը դատապարտուի։ Այո՛, բնութիւնը իր օրինաց անհնազանդ դտնուողէն տարապարեալ վրէժ կառնու, երբեմն շուտ, երբեմն ալ երկար տարեն երկայնամտութիւն ցոյց տալէն զկնի. սակայն վրէժ կառնէ։

Բաց 'ի տցանէ սեռական կեանքը կարգը անիմաստի, հրաշալի և դեռ չլուծուած բնութեան գաղտնիքներ ալ ունի որոնց վրայ ո՛րքան խորհինք այնքան հիացմամբ լեցուին մեր սրտերն։ Ասոնց կարգէն է ծննդական գործարանաց աքանչելի տուեստիւ և վարպետութեամբ յօրինեալ կազմակերպութիւնը, կաթիլ մը սերմէ և մանրացոյց գործիով միայն տեսանելի ձուէ մը մարդկային նոր էակ մը գոյանալը և բնութեան կարգադրու-

թիւնը մարմնոյ էն ազնիւ մասունքն սերման վերածելու մասին։ Ո՛վ որ առնք քննած և ուշադրութեան է առած հարկաւ այն ազնիւ գործարանաց, նրբակազմ զօրութեանց և մարմնոյ ամենազուտ հիւթոց հետ քան պատշաճին պիտի վարուի, լաւ գիտնալով որ նոքա մարդկային մարմնոյ էն կարեւոր պաշտօններն և նպատակներն կատարելու համար են։ Արդ այս ամենակարեւոր գործարաններն չարաչար գործածողներն մեծաւ մասամբ նոցա կազմութեան, գործողութեանցը, պաշտօններուն և նպատակներուն անտեղեակ լինելնուն համար պէտք է հոս արական ու իգական ծնողական գործարանաց համառօտ բայց որոշ տարբերութիւնը ընենք։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ ԾՆՆԴԵԱՆ

Ընդհանուր առմամբ արական և իգական ծննդական գործարանաց մէկզմէկէ ունեցած տարբերութիւնը ու զանազանութիւնը սա՝ պէտք կրնանք տեսնել թէ արականը պարզեղող և իգականը ընդոշնող մասն է։

Յայտնի է որ ասի լոկ զուգաւորութեան արարքին նկատմամբ կրնայ բաւել, ինչու որ կինն ալ իր տիկնքներուն միջոցաւ երախային կաթ ու սնունդ տուած առնելը, որ այս ալ սեռական կենաց պաշտօններուն մէկ կարեւորագոյն մասն է, պարզեւողի պաշտօնը կը կատարէ։ Սակայն մէջի ընդհանուր տեսնելը հատուած բռնելով կը տեսնենք որ արական ծննդական գործարանք լոկ սերմը պարզեւելու կամ հաղորդելու նպատակաւ կազմակերպեալ են, ըստ այնմ նոքա երկու գլխաւոր մասերէ կը բաղկանան, ասոնք են.

Արանդամ (Penis), որոյ պաշտօնն է իգական ծննդական անդամներն բանալով սերմը նոր էակ մը կազմելու գործարանը հաղորդել, և

Ամորձիք (Testikel), որոնք սերմը կ'պատրաստեն, որ Արանդամին հրամայած առնելը սերման մթերանոցէն անոր մի մասը ազատ կը թողուի։

Այս երկու գլխաւոր գործարանաց պաշտօններն կատարելու համար քանի մի օժանդակներ կան, ասոնք են մի քանի երակներ,

ՊԱՏԿԵՐ Ա.



ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ա. Մէզի պահարան.
Գ. Սերմի լար.
Զ. Սերմնանց.
Ը. Թ. Միզանց.
Լ. Սար.
Ծ. Գարկ ամորձեայ.
Բ. Աղբի ալիք.
Դ. Ե. Ամորձիք.
Է. Սերմի շտեմարան.
Ի. Արանգամ.
Խ. Սպնդային մաս.
Կ. Ոսկոր հեշտական.

ջիղեր, մաններ, անցքեր և ամրձեաց պարկը, որոնք ամենը Արանդամին և Ամրձեաց ծառայութեանը համար են։

Արանդամը կը բաղկանայ ամնդային մարմինէ որոյ մէջ կան բազում արեան երակներ, ջիղեր, մաններ և անցքեր. ասոնք ամենը նորա խիստ դիւրզգայ և գրգռելի լինելուն պատճառ կըլլան, արեան երակներն և ամընդային մարմինն ալ գրգռուած միջոցին արեամբ լեցուելով Արանդամի ծաւալում, ուռում կամ կանգնում տեղի կունենայ։ Նա յարտաքուստ ամբողջ մարմնոյ մորթոնէ ծածկեալ է, որ նորա ծայրն հասնելէն ետեւ ետ կրնայ ծռուիլ. այս ետ ծռլուող մաշկը թլրփան (Præputium) կը կոչուի։ Ամնդային մասը խել մը առաձգական թելերէ բաղկացեալ թաղանդով մը ծածկեալ է, որոյ մէջէն նաեւ Միզանցքն կ՚անցնի և Սարին ծայրը կաւարտի։ Սարը, որ Արանդամին ծայրն և վերջն կը կազմէ, զգայական ջիղերուն ալ կեդրոնատեղին է և հաճոյից կեդրոնը։ Թլբատը նորա վրայէն ետ դարձնելով զանի պարզ ուորոշ կրնանք տեսնել. նա Արանդամին տակի կողմէն ալ մաշկային կապով մը թլբատին հետ միացած է. այս կապը, որ իր նրբութեան համար խիստ դիւրաւ կրնայ վնասուիլ, սովորաբար մաշողական ախտէն յառաջ եկած վէրքերուն նիստն է։

Միզանցքը (Urethra) խողովակ մ՚է որոյ մէջ խել մը ոլոռնաձեւ մաններ կան. ասոնց

պաշտօնն է հիւթ մ՚արտադրելով Մկրտչեանց.քը միդին կիրչ զօրութենէն պաշտպանել։ Մի-զանց.քը Աբանդամին տակի կողմը զետեղեալ է. նորա ամէն մասը մի և նոյն բայնութիւնը չունի։ Նորա Աբանդամին Սարին մէջ վերջացած տեղը փոքրիկ խառոջ (Lacuna) մը կայ. հոն է մաշտական ախտ ունեցողին ցաւոց կեդրոնը։ Այսպէս Մկրտչեանց.քը մէզին, սերման, և որոնաձեւ մասներուն արտադրած հիւթին իրը ճանապարհ կը ծառայէ։

Այս ամենէն յայտնի կերեւի որ թէեւ Աբանդամն զուգաւորութեան արարքին մէջ ամենակարեւոր պաշտօն մ՚ունի, սակայն ուրիշ այլ ևս կարեւորագունի մը ըսկ իրը գործիք ու միջոց կը ծառայէ. վերջինը Ամորձիքն է։

Ամորձիք թաղանթային պարկի մը մէջ ծրարեալ երկու փոքրիկ ձուաձեւ մասնիք են, աղաւնիի հաւկիթի մեծութեամբ երկու կողմերն փոքր ինչ ճնշեալ։ Ասոնք չիրերէ բաղկացեալ լարով մը ծննդական անդամոց այլ մասանցն հետ կապուած են։ Սոյն լարին մէջ կը բովանդակին Սերմնանց.քը, երակներ և ջիղեր, որոնք, ամենպային թաղանդով մը շրջապատեալ, սերման գոյացման համար պէտք եղած նիւթն ու ուժն Ամորձեաց կը մատակարարեն։ Ամորձեաց մէջ պատրաստուած սերմը Սերմնանց.քին միջոցաւ սերման շտեմարաններուն մէջ կամիրուի. սոյն շտեմարաններն մէզին պահարանին վարի կողմին և աղբին ալիքին մէջ ուեղն զետեղեալ են, ուր

սերմն հաւաքուելով խոզուկի մը միջոցաւ ոչ թէ միայն միզանցքին մէջ կը հոսէ, այլ մանաւոր մասնի մը ջրհանումն ճնշիչ զօրութեամբը Միզանցքին բերնէն մի քանի մատնաչափ հեռու կը ցայտեցնէ որով սերմն այլ ևս ապահով լինի իրեն համար որոշեալ կէտին հասնելու։

Իգական ծննդական գործարանները բացատրելէ առաջ արական ծննդական գործարանաց արտաքին ձևն փոքր ինչ քննենք, զի նոցա մէջ շատ անգամ ձևի տարբերութիւն և զանազանութիւն կայ, և շատերն զայս տեսնելով կը վրդովին, ինքզինքնին թերանդամ կամ խեղանդամ համարելով։

Ծննդական անդամոց առողջ և անգործ միջոցին Սարն սովորաբար թլփատէն ծածկուած է։ Սակայն այնպիսի անձինք ալ կան որոնց թլփատն 'ի բնէ և 'ի ծնէ Սարին վրայէն ետ քաշուած է և զանի մերկ թողած է։

Ամուրձեաց պարկն առողջ վիճակին մէջ թոյլ և առկախեալ լինելու չէ. նորա մէջի երկու ձուաձեւ մասներուն մին բարձր և միւսն ցած զետեղեալ պէտք չէ ըլլայ. շատ մարդիկ այս թերութիւնն ունենալով հանդերձ նեղութիւն կամ վնաս չեն զգար, բայց լաւագոյն է բժիշկի մը դիմել։

Ուրիշներու ալ թլփատին բացուածքն այնքան նեղ լինի որ անհնար է զանի Սարին վրայէն ետ քաշել. ասի անհաճոյ դէպք մ'է. եթէ զանի ետ քաշելու չանք ըլլայ դէշ հետե-

ւանք կրնայ ունենալ, ուստի այն մասին վի-
բաբուժական գործողութեան հարկ կայ՝ որպ
պատճառած ցաւն ոչինչ է։

Ուրիշ զարուղութիւն մ՚ալ այն է որ
ամանց Միղանց.քին բացուածքը բնական տեղն
չըլլալով Սարին կամ Արանդամին վրան կամ
տակը կը լինի։ Այս խեղակազմութիւնը թէև
առողջական մասին բնաւ կարեւորութիւն
չունի, սակայն այսպէսիք անկարող լինելով
սերմը իգական ծննդական գործարանաց մէջ
կէտը ցայտեցնելու, ուր նոր էակի մը գոյու-
թիւնը կը կատարուի, յայտնի է որ ապարդ-
դիւն և անպտուղ լինին։

ԳԼՈՒԽ Գ.

ԻԳԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ ԾՆՆԴԵԱՆ

Իգական ծննդական գործարանք արականին նման երկու մասանց կը բաժնուին. արտաքին և ներքին։

Իգական ծննդական գործարանաց արտաքին մասը խիստ մաղերով և մսային Երթուածներով թաքեալ է, որոնք ներքին մասունքը օդէ, փոշիէ և այլ աղդեցութիւններէ կը պաշտպանեն։ Սոյն Երթանց եռին թաղանդով շրջապատեալ լայն անցք մը կայ որ Գաւիթ (Vagina) կը կոչուի. առաջ բերանը փոքրիկ խառուշ մը կայ որոյ մէջ Միզանցքը կը հասէ։ Կուսաց Գաւիթը մաշկի խեղ մը ծալքերէ կը բաղկանայ, որոնք ամուսնանալէ ետեւ փոքր ինչ կանհետանան։ Սոյն մասին առաձգականութիւնը խիստ զօրաւոր է, զի նա երկու նպատակ ունի, նախ Արանդամն դէպի Արգանդն առաջնորդել և երկրորդ երախային Արգանդին մէջ գոյութիւն տալէ ետեւ զանի յաշխարհ փոխադրել։ Այս պատճառաւ նոյն մասին մէջ խեղ մը ապաձեւ մասներ կան որոնց արտադրած ահեցուցիչ հիւթը սոյն անցքը յարմար ահուն կընէ։ Գաւիթին ներքին ներդծայրը Արդանդին մէջ կը մնէ, ապա տանձաձեւ, դատարկ, մսային, առաձգական զօրաւոր անօթ մ'է որոյ պաշտօնն է արական սերմն ընդունելով գոյացած երախային բնակատեղի լինիլ մինչև նորա կազմակերպուշ

ՊԱՏԿԵՐ Բ.



Ա. Արտաքին Շրթունք.
Գ. Հեշտակէտ.
Ե. Մէջին պահարանը.
Է. Արգանդ.
Թ. Անջրպետ.
Լ. Հեշտական ոսկոր.
Բ. Ներքին Շրթունք.
Դ. Միզանցքին բերանը.
Զ. Գաւիթ.
Ը. Աղբաղիքին բերանը.
Ի. Աղբաղիք.

ՊԱՏԿԵՐ Գ.



Ա. Արգանդին պատը.
Գ. Արգանդին գուռը.
Ե. Զուարարքը.
Է. Արգանդին դիրքը պահող լարերն.
Բ. Արգանդին խոռոչը.
Դ. Արգանդին գաւիթը.
Զ. Զուանցք.

թեան աւարտումը։ Այս անօթին մէջ Զուանց.ք կոչուած երկու խողովակներ կը մտնեն, որոնց միւս ծայրերը Զուարտներուն (Ovavia) մէջ կը մտնեն։ Պարբերական համանց միջոցին մէկ կամ մի քանի ձու Զուանց.քներուն մէջէն Գաւիթը կը քշուին և հոն արական սերմին հետ հաղորդակցութեան գալու կ'սպասեն որ արդասաւորին և բեղմնաւորին։ Զուարտքը երկուք են և արական Ամրձեաց նման այս փոքրիկ մարմնոց մէջ արդասաւորութեան համար պէտք եղած ձուերն կը կազմուին. նոքա խիստ մանր են և առանց մանրադիտակի՝ աչաց դեղնագոյն հիւթի կաթիլներ կերևին։

Ասոնք են ահա այն գործարաններն որոնց միջոցաւ բնութեան ամենամեծ՝ և մինչև մօտ առենները դեռ անհասկանալի համարեալ հրաշալեաց մին, նոր էակի մը գոյացումը կը կատարուի։ Ո՛րքան որ այս հրաշքն մեծ է, այնքան և ս կարեւոր է համայն մարդկութեան և ամէն մէկ անհատի այն գործարանաց վրայ տեղեկութիւն ստանալ և ըստ այնմ զանոնք գործածել։

ԳԼՈՒԽ Դ.

ԲՆԱԽՕՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

Բնախօսական քննութեամբ կը տեսնուի որ սերմը ապնիւ և թանկարժէք աստղաւոր քմ'է և արեան չափ, այն անկէ առաւել կարեւոր

է մարմնոյ . ուստի ինչպէս արեան մխու�մն և սպառումն ահռելի վտանգաց կենթարկէ ըզմարդ , նոյնպէս և առաւելքան զայս սերման սպառումը և վատնումը մարմինը աւերմանց կը մատնէ : Ասի անթիւ փորձերով վաւերացեալ տխուր ճշմարտութիւն մ'է , որոյ յաւալի օրինակներն դիմաւթեան վրայ խօսած ատենիս պիտի տեսանք (Աշնան տերեւներ) :

Սերմը Ամրձեաց մէջ կը գտնայ : Սոյն գործարանին մէջ արիւնէն ամենակարեւոր և անուցիչ մասունք հաւաքուելով սերմի կը վերածուին , որ սերման շտեմարանաց մէջ կը պահուին , որոնք երբ լցուին անշուշտ մարդս զանոնք փոքր ինչ պարպելոյ պէտքն կզգայ : Եթէ մարդս անձամբ այս պաշտօնս չկատարէ բնութիւնը սոյն թանկ հիւթը ուրիշ կերպով կը գործածէ , այսինքն զանի վերատին արեան հետ կը խառնէ : Բնութեան այս խմաստուն խնայողութիւնները տպրեցնելու է մարդուս արեան և սերման նման ատուածային թանկագին պարգեւներն 'ի զուր վատնելով մարմինը կործանման չվատնել :

Թէ և սերման արտադրիչ գործարանք մարդնեաց ատենը հետը կը բերէ , սակայն շատ ժամանակի կը կարօտի որ սերմն արտաքսուելու կարող լինելու չափ առատանայ : Սակայն երբ մարմինը կատարելութեան հասած և սերմն շտեմարանաց մէջ հաւաքեալ է յայնժամ վաղն արդասաւորութեան կրնայ արտաքսուիլ : Սերման մարդուս մարմնակազմութեան կա-

տարբերագործմանը ուրբան կարեւոր լինելն առ-
կէ նաեւ կրնայ ապացուցուիլ, անոնք որ
այս կենդանեան հիւթէն տառատ գանձ մը կը
կրեն իրենց մէջը, հատուտ արական ձայն, ա-
ռատ և խիտ մօրուք և անվեհեր սիրտ մ'ու-
նին։ Տե՛ս այն դժբաղդ արարածներն՝ որոնց
ամորձիքներն մատաղ հասակնուն մէջ կտրե-
լով հեռացուցած են որ պարտներու տիկ-
նանց պահպանութիւն ընեն։ Նոքա ամենն ալ
կանացի տուր ձայն մ'ունին, երեսին լերկ է,
երկչոտ են անոնք, անզօր ու տկար։ Ասի նա-
եւ խրատերու է մարդս սեռական հաճոյից
մէջ խիստ հոգատար և չափաւոր ըլլալ որ մի
դուցէ ինքզինքը արական այն վեհ և ճշմարիտ
կնիքէն և զգեստէն զրկէ։

Արբունքի հանելուն պէս ծննդական ան-
դամոց գրգռանաց ամենազօրաւոր և հրապու-
րիչ ժամն կը զարնէ, տակայն և այնպէս երի-
տասարդը ձիշդ այս փորձառութեանց միջո-
ցին ամեն առենէ աւելի չափաւոր լինելու է,
զի խիստ դիւրին է նոյն առեն որոշեալ չա-
փէն և շրջանէն անցնելով մարմինը իր կազ-
մութեան կատարելութիւնը աւարտող միջոց-
ներէն զրկել և թերակազմ մնալ։ Զանա՛ դի-
մադրել. եթէ անդամ մի ցանկութիւնը ան-
ձահարի, հոն է յաղթանակը. զի չ'վատնուած
սերմը արեան շրջանին հետ խառնուելով մարմ-
նոյ զօրութիւնը կը բազմապատկէ։

Տարրալուծութիւնը մեզի կիմացնէ թէ սեր-
մը գլխաւորապէս հաւկիթի ապիտակ է, քանի

մ'ալեր է և խժային հիւթէ մը կը բաղկանայ, իսկ մանրացողը սերման մէջ շարժող, ձուաձեւ, սրածայր, լայն և թելի նման պոչով փոքրիկ մարմիններ կը ցուցնէ։ Այս շարժուն մարմինները սերմնորդք (spermatozœ) կը կոչուին, և փորձով հաստատուած է որ ար-

ՊԱՏԿԵՐ Դ.



Ա. Սերմնորդք մարդկան. Բ. Սերմնորդք արջան.
Գ. Սերմնորդք մկան.

տադրիչ զօրութիւն չունեցող մարդիկ և. կենդանիք այն սերմնորդներէն զուրկ են։ Սերմնորդաց վրայ ուրիշ ամէն բաւածներն լոկ ենթադրութիւններ են. անոնց գոյութենէն և արդասաւորութեան համար կարեւոր քիմիական զատ ամէն բաւածն ուսա է։ Ընթնք որ

ծննդական գործարաններն չափազանց դոր-
ծածուելով դառն հետեւանաց պատճառ լի-
նին, ասի յայտնի է, զի այս ընթացքով զօ-
րութիւնը կապառի և ջիղերն այն ատիճան
կը ձգին և կը գրգռին որ այն նրբակազմ
անդամք և բոլոր մարմինը կը յոգնին, թու-
լանան և ուժաթափ կըլլան. այո՛, չափազանց
յագուրդը յանկարծական մահ եւս պատճա-
ռելուն օրինակներն պակաս չեն։ Հեշտական
գործողութեանց ամեն մէկ տեսակը արեան
շրջանը դէպի վիզն, աչքերն և ուղեղն կա-
ռաջնորդեն. նաեւ քանի անգամ որ ծննդա-
կան գործարանք չարաչար գործածուին ուղե-
ղը արիւնով լեցուելով ընդհանուր թուլու-
թիւն, դժգոհութիւն, տխուր, ապուշ և ա-
նտանական հայեցուածք, 'ի վերջոյ խելագա-
րութիւն կամ յանկարծական կաթուածահա-
րութիւն կը յաջորդէ։ Պատմութիւնը կը վը-
կայէ թէ Հուներուն թագաւորն, Ալթիլլայ
մերձաւորութեան ատեն կաթուածահար լի-
նելով մեռաւ. նոր ատենները ալ այսպիսի
դէպքեր տեղի ունեցած են։ Զուիցերի քա-
ղաքաց մէկին խորհրդականներէն մին բա-
ւական ծերացած լինելով, նոքէն ամուսնա-
ցաւ. մերձաւորութեան ատեն հարկադրե-
ցաւ նա այն արարքն անկատար թողլով եւ
կենալ. նոյնը պատահեցաւ անոր՝ մերձաւո-
րութեան փորձն ամեն անգամ կրկնած ատեն։
Խորհրդականը խելմը բժիշկներու դիմեց, ո-
րոնց մին նորա շատ տեսակ դեղեր տալէն ե-

տեւ՝ ապահովցուց զանի աներկիւղ իր բաղ-
ձանքը կատարել։ Այս քաջալերութեան վրա-
տահելով, միեւնոյն փորձն կրկնած առնելը
դարձեալ անյաջող եղաւ, ամենայն ջանքն 'ի
գործ դրաւ նպատակին հասնելու, սակայն,
ա՛ւաղ անոր յիմարութեանը, կնոջը բաղկացը
մէջ հոգին աւանդեց։

Ինչպէս որ ծննդական անդամոց վրայ կա-
տարուած այս ճնշումը ուղեղին վրայ կազդէ
և հոն արիւն կը հաւաքէ, այնպէս ալ փոխա-
դարձաբար ուղեղին վրայ եղած ճնշումը ծը-
ննդական անդամներուն վրայ կը ներգործէ
և զանոնք արիւնով կը լեցնէ։ Կախուած մարդ-
կանց վրայ տեսնուած է որ նոցա արանդամն
կը կանգնի, և սերմն կը հոսի. կախուած կա-
նանց ալ պարբերական հոսումը կսկսի։ Այսի
բաւական ապացոյց մ'է թէ ծննդական դոր-
ծարանաց և ուղեղին մէջ սերտ յարաբերու-
թիւն և հաղորդակցութիւն կայ։

Նոր էակի մը գոյանալն քննելով կը տես-
նենք որ նա յոչնչէ չգոյանար, այլ երկու է-
ակք իրենց էութեանց ամենազնիւ և ամե-
նալաւ մասն զոհելու են նախ՝ և ապա արար-
չական զօրութիւնը նոր էակը կը գոյացնէ։
Այս զոհողութիւնը մարդուս այնքան դժուար
կուգայ որ բուռն կռիւ մ'է կը ծագի. Չիղերն
յեռին ատիճան ձգտելով կը դիմադրեն և
կընդիմանան մարդկային էութեան ամենափոքր
մասը զոհելու։ Ահա ճիշդ այս զոհողութեան
վրայ է հիմնեալ հայրական և մայրական սէրն

առ զաւակունքս, զի ծնողք իրենց մանկանցը մէջ բուն իրենց էութեան մէկ մասն նշմարելով կը սիրեն զանոնք և անոնց վրայ համակրութիւն մը կզգան, զի նմանը՝ նմանին կը հակամէր։ այս է հայոյն բնութեան մէջ տիրող օրէնքը մինչեւ իսկ անկենդան առարկայից նկատմամբ։ Այս մասին մարդս բուսոց կընմանի։ Բոյսը կատարելապէս զարգանալէ ետեւ սերման հատերն կարտադրէ, յետոյ զանոնք պէտք է զոհէ, որպէսզի իրեն սեռին նման նոր տունկ մը յառաջ բերէ, շատ բուսոց համար սերման կորուստը կամ զոհողութիւնը կենաց կորուստ, մահ, է, զի սերմն կորուսանելէ ետեւ նոքա կը չորնան։

Մարդկային էակ մը գոյացնելու մասին բնութեան զօրութիւնը ոչքան որ հիանալի և վեհ է տակաւին և այնպէս նոր տակաւին ամենակատարեալ գործարանաց և ամենալաւ հիւթոց կարօտ է. առանց ասոնց բնութիւնը անկարող է։ Ամուսնացեալք ոչքան ջանան մանկանց ծնողք լինելու, 'ի զուր կը ճգնին, եթէ նոցա ծննդական գործարանք աւերեալ և սերմն անկատար է, այս երկուքին պատճառն ալ ոչ թէ բնութիւնն է այլ բուն իրենք են։ Սիրոյ հաւրը մարդուս սրտին մէջ ծածկած է և մինչև որոշեալ ժամանակը հոն կը քնանայ և ոչա կարթնայ. ուստի ով որ այն պայմանաժամէն առաջ քնացող աւիւծը կարթնցնէ անոր ճանկերուն որս լինելուն բնաւ տարակոյս չկայ։ Ուստի այն որ կզգայ սեռա-

կան կենաց մարդկային համայն կենաց համար ուրբան կարեւոր լինելն թող լաւ գիտնայ թէ նա վեհ կոչում, աղնիւ պաշտօն և քաղցր ծառայութիւն մ՚է, թէ նորա նախնական նպատակը մարդս զուարճացնել և հեշտական հաճոյք յարուցանել չէ, այլ պարտք մը առ համայն մարդկութիւն և թող միշտ բնութեան անխարդախ ձայնին անսալով այն պարտքն վճարել ջանայ։

Բոլոր ըստուածներն ամենակալով գլուխն աստուածն։ Մերձաւորութեան սահմն չկղերն, ուղղին և ծննդական գործարանք բուռն կերպով գրգռուելով հիւթ մը կարտադրեն որոյ գոյութեանը համար մարմինը բոլոր իր զօրութեամբը և գործարաններովը դիշեր ցերեկ անդադար կը գործէ։ Այս հիւթը սերմ կը կոչուի. սերմը մարմնոյ ամենէն աղնիւ հիւթերէն գոյացած է որոյ 16 տրամ վաճառումը 640 տրամ արեան սպառման հաւասար է։ Ինչպէս որ սերման նոյնպէս ալ ծննդական գործարանաց ուշադրութիւն պէտք է ընենք զի նոցա տուած որ և է վնասը հեռապրական թելերով մանաց, ողնայարին և ուղեղին կը հաղորդուի։ Մերձաւորութեան կարողութիւնը և հարկաւորութիւնը բնութիւնը ինքը պիտի որոշէ. ուստի զգոյշ լեր երեւակայութիւնը գրգռելէ թէ կերակուրով թէ խմելիքով և թէ արուեստական միջոցներով։ Ո՛վ որ, առանց բնութենէ հրաւիրուելու, զանձն այն նպատակին գրգռէ, իր կենական, կենսապահ և

կենսատու հիւթերն և զօրութիւններն կաւերէ, կը խանգարէ, կը վատնէ և կը փճացնէ և կըլլայ ամենախեղճ, ամենաթշուառ և ամենաողորմելի արարած մը։

ԳԼՈՒԽ Ե.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

Եթէ բնախօսութիւնը կը սովրեցնէ թէ սեռական կեանքը ֆիզիկական կենաց, մարմնոյ ամէն մէկ դրութեան (sistem) և նրա գործարանաց և անդամոց հետ հիւսեալ լինելով և անոնց հետ սերտ յարաբերութեան մէջ գտնուի, այժմ բարոյական հետազօտութեամբ պիտի տեսնենք թէ այն կեանքը հոգւոյ և մտաց ներքին կարողութեանց վրայ ևս մեծ ազդեցութիւն կը բանեցնէ։ Ուստի քանի որ թէ մարմինը և թէ հոգին, թէ միտքն և թէ ներքին կարողութիւնք այն կենաց մէջ բնութեան օրինաց հակառակ ընթացք վարելէ այնքան կազդուին, որքազան պարտք մ'է հեշտական ամէն տեսակ մարութեանց դէմ բանիւ և արդեամբ ամենայն եռանդով մաղաչիլ և մարմինն և հոգին, ներքինն և արտաքինն սարսափելի տերութիւնէ զերծ և ազատ պահել։

Առանց անհատաւոր և հասարակաց մէջ 'ի սկզբանէ աշխարհի տիրող այն բանակռուին

մանակցելու, թէ արդեօք Աստուած կամ թէ բնութեան մէջ գործող ապարիչ զօրութիւնը մարդուս գոյութիւն տուաւ և կուտայ կարելի է խիստ ինքնայայտ և անընկճելի ճըշմարտութիւն մը հրատարակել թէ Բարձրագոյն, Վեհ Կամք մը մարդուս գոյութիւն պարգեւած է. այն Վեհ Կամքը մարդուս սըրտին խորը սիրոյ և անձնապահութեան գըրգիռներ թաղած է. և այս երկուքին կատարմանը համար պէտք եղած գործարաններն ու միջոցներն պարգեւած է։ Այս առաջին անպարտելի իրողութեանը վրայ եթէ ա՛ն մատչելի ճշմարտութիւնն ալ աւելցնենք, այսինքն թէ Աստուած և թէ Նորա ձեռաց գործն, բնութիւնը, անբարոյական գործ մը ոչ կը պատճառէ ոչ ալ Իր արարածներէն կը պահանջէ, յայնժամ անշուշտ կրնայ եզրակացուիլ թէ սեռական գրգիռն յարգեցնելն ոչ թէ միայն անբարոյականութիւն չէ, այլ թէ անուղղ բնութեան և իր Ամենիմաստ Արարչին վեհ կամքն կատարած լինելիք։ Եթէ Աստուածային ձայնը "աճեցարո՛ւք և բազմեցարո՛ւք" հրամայած ալ չըլլար, տակաւին մտային և հոգւոյ ծուռ և թիւր գաղափարներով մշուակուտութեան ուխտեալներուն վրայ բնութեան տեղացած պատուհասք, բնութենէ և արուեստիւ անկարողացած նեղքինեաց դառն խորհրդածութիւններն և արտային ողբալի հառաչանքներն պիտի համոզէին զմեզ սեռական կեանքն յարգելու։ Նաեւ ծնողական և որ-

դիական այն խանդակաթ սէրն, զոր բնութիւնը սրտին մէջ դրած է, զոր ամեն դարուց և երկրից մէջ 'ի սկզբանէ իբր սրբազան պարտաւորութիւն մը համարեալ է, և՛ապացուցանէ թէ սեռական կեանքը բարոյապէս արուծնեալ է, զի առանց սրա չէ հնար որդիական և ծնողական սէր։

Արդ քանի որ սէրը Աստուծոյ նախատեսութեամբը որոշեալ նպատակի մը համար մեզի դրուած աւանդ մ'է և որդեծնութիւնը կատարումն օրինաց բնութեան, հետեւապէս սիրոյ կեանքն ալ սրբազան տաճար մը պարտի լինի. ուստի առանց բնութեան հրաւիրանաց սպասելոյ խրոխտաբար ապօրինաւոր ճամբաներ երթալն թէ Աստուածային և թէ բնութեան օրինաց զեղծում և նոցա դէմ եղեռնական յանցանք մ'է։ Մի՛ խաբուիք, դո՛ չէ Սրբազան Մատեանը, Աստուած ծաղր չըլլար. նոյնպէս ալ բնութիւնը ինքզինքը ծաղր ընել չթողուր. գթութիւն և ողորմութիւն բառերն նա չ'հասկնար. նա միայն վրէժ բաւը գիտէ, և ամէն իր օրէնքն զեղծողէ անողորմաբար վրէժ կառնէ։

Եղեռնական ոճիր մը գործած լինի նա իր զօրութեանց և կարողութեանց դէմ, երբ սերմը, լոկ հեշտական հաճոյից վայրենական յագեցմանը համար, կսպառէ և կը վատնէ, առանց բնութեան հրաւիրանացն սպասելու և առանց մանկանց գոյութիւն տալու նպատակին ծառայելու։ Աստուած մար-

դրս անասունին զանազանած է գաղղութեան վեհ կարողութիւնը պարգևելով, որով նա չարն բարին, վնասակարն օգտակարին կը ազրոշէ և ամեն իր գործոցը պատասխանատու է. այս կարողութեամբ նա սեռական յարաբերութեանց հետեւանքն և արդիւնքը կրնայ կշռել և անկից խուսափիլ, քանի որ կենդանին այս ամենին զուրկ է և բնազդմամբ կը գործէ։ Այս ամենին զատ Աստուած նաև ամուսնական սրբազան կարգադրութիւնը ըրած է, որպէս զի մարդս ամեն տեսակ ապօրինաւոր և վնասակար ընթացքներէ հեռանալով իրեն սեռական յարաբերմանց ազնիւ և բնական ճանապարհն ուղղէ։ Ամեն բարոյական գործ վարձատրութիւնն իւր հետ կը բերէ, ուստի բնութեան ցոյց տուած այս բարոյական ուղղին մէջ քալողն ալ քաղցր վարձքերով կուրախանայ։ Ուրիշ բերկրութիւն զգայ այրն երբ ուղիղ ճամբով տարած մանկիկն պատին վրայ կը սեղմէ, ուրիշ աչքերով կը նայի նոյն երախային վրայ իր հաւատարիմ և վտահելի ամուսինը և ուրիշ բան կզգայ նա որ առանց ամուսնանալոյ գիշերային շուայլ հեշտութիւններով ուժաթափ չինելով իր առանձին և տխուր բնակարանը կը մտնէ։ Այս այս երկուքին մէջ տարբերութեան անդունդը կայ. մին երկինք է իսկ միւսն դժոխք։ Սակայն լոկ մարդուս վարմունքէն է կախեալ իր վիճակը երկնային կամ դժոխային ընել։ Այս մասին բնական օրինաց և նորա դծած վեհ

նպատակին համաձայն վարողին հոգւոյ և մարմնոյ կարողութիւնք սեռական կենաց հաճոյքը և անոր հետեւանքը նոր ի նորոյ կը զարգացնեն և սիրոն եղական բերկրութեամբ կը լեցնեն, իսկ բնութեան ցոյց տուած շրջանէն անցնողը տարաբնեալ պատիժներով յանցանքը կը տուժէ, և ասի որքան ուշանայ այնքան ահռելի լինի։ Մարմնական ուերուժներէ, խանդարումներէ, անբուժելի ախտերէ և հիւանդութիւններէ զատ, խիղճը՝ որ է յանցանաց զգայարանքը, ոնոտանելի, մինչեւ խելագարեցուցիչ ցաւերով կը տանջուի, և բնութեան օրինաց անհնազանդ գտնուելուն վրայ անընդհատ ապաշխարելն և զղջալն՝ ցաւերն եւս կը բազմապատկեն։ Մի՛ խաբուիք, Աստուած ծաղր չըլլար։ Տարիներ կանցնին գուցէ առանց հեշտութեանց հետեւանքն երեւնալու, առաջի նշաններն թեթեւ կը թուին. մէյ մ՝ալ յանկարծ պատժոյ խարազանը կը շառաչէ և դուք զձեզ կործանեալ, ուերեալ յաշխարհէ արտաքսեալ, մարմնալ, հոգեալ և բարոյապէս ոչնչացեալ գտնէք։

Ասոնք հեշտական շուայլութեանց ծաւալումն արգիլելոյ համար պէտք է երիտասարդք սեռական կենաց բարձր ատիճանին վեհ նպատակը, եղական արժանիքն և նշանակութիւնը լաւ հասկնան։ Քանի որ այժմեան երիտասարդութեան մեծագոյն մասն այն կենաց մէջ զգայական հաճոյից յաղթողէն զատ այլ վեհ նպատակ մը չնշմարէր և չուզէր նրշ-

մարել, յոյս չկայ շատ հեշտութեանց սրբութեաց արշաւանացն առջին պատ քաշել։ Ուստի ծնողաց և դաստիարակաց ուղղելով խօսքերնիս խնդրեմք որ, ի սէր մարդկութեան և ի սէր անդին կեանց, իրենց յանձնեալ տղայոց հետ յաճախակի խօսակցին ոյն կէտիս և խընդրոյս վրայ որ բնական և Աստուծմէ անօրինեալ և արբեալ է. նորա նշանակութիւնը կատարելապէս բացատրեցէք անոնց. արմատին խըլեցէք ամէն տուտ ամօթխածութիւն ձեր սրտերէն և ինչպէս որ մանկանց թոյն ուտելն տեսած ատենին զանոնք կզդուշացնէք և նորա հետեւանքներն անոնց կը բացատրէք առանց ամաչելու, այնպէս ալ սեռական կեանց մէջ բնական օրինաց զեղծումներուն դառն հետեւանքներն անոնց պարզ և որոշ կերպով բացատրեցէք և զանոնք նորէն և նորէն անկէց զգուշացուցէք։ Յայնժամ և միայն յայնժամ յոյս մեծ ունինք որ ձեր զաւակունքը երջանիկ ընտանիքներ պիտի կազմեն. յայնժամ այս երջանիկ ընտանիքներէն առողջ սերունդ մը պիտի գոյանայ. յայնժամ ոյն երջանիկ ընտանիքներէ և առողջ սերունդներէ բաղկացեալ Հայ ազգը տիեզերաց պարծանք մը պիտի լինի, և ձեր վրայ պիտի հանդէս զանոնք մեզաց անէծքէն և բնութեան սարսափելի վրէժին ահռելի և սոսկալի պատուհասներէն ազատած լինելնուդ օրհնութիւնը։ Այս է ձեր վարձքը։

ԳԼՈՒԽ Ե.

ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

Թէ և դիմադրութիւնն ալ հեշտական մոլութեանց ցանկին մէջ է, սակայն անոր վրայ Աշնան տերևներուն մէջ ընդարձակօրէն խօսած լինելնուս համար հոս պէտք է զանց առնենք զանի, միայն թէ կը խնդրենք ընթերցողէն որ զանի քանի մը անգամ ամենայն ուշադրութեամբ կարդան, նորա առաջին տպագրութիւնը արդէն ապառած լինելով քիչ օրէն երկրորդ տպագրութիւնը պատկերներով բացատրեալ և նիւթն ընդարձակեալ պիտի հրատարակուի։ Ուստի թողելով դիմադրութիւնը անցնինք Սերմնահոսութեան։

Մարդկային մարմնոյ մէջ զանազան հիւթեր արտադրող գործարանք շարունակ կը գործեն։ Փայծաղը անընդհատ լեղի կարտադրէ. երիկամունք գիշեր ցերեկ մէզն արիւնէն կը զատեն. ամորձիք անընդմիջաբար սերմը կը պատրաստեն. նոցա արտադրած սերմը շտեմարաններու մէջ կը հաւաքուի, ոչ թէ վերատին արեան շրջանին մէջ մտնելու համար այլ ծընընդական արարից արգասաւորութիւն տալու նպատակաւ։ Երբ սերման շտեմարանները կը լեցուին, հարկաւ կուռին և կընդարձակին. ապի պատճառ լինի սեռական գրգիռին։ Եթէ մարդս ըկ ոչն հեշտական գրգիռին գերի լինի առանց հեշտական վատ ունակութեանց և մոլութեանց գերի լինելու,

յայնժամ կենդանեաց նման, բնութեան օրինաց հետեւելով, բաղում հիւանդութիւններէ զերծ և ազատ մնալով անոնց պէս բազմարդիւն պիտի լինէր։ Սակայն մարդս այս մասին կենդանիներէն եւս կը նուաստանայ։

Սերման շաբաթանը սահմանեալ ատենէն առաւել չկրնար ընդարձակիլ, սակայն երբ ծաւալման որոշեալ շրջանին հասնի ծննդական անդամք անդիմադրելի կերպով կը գրգռին և եթէ օրինաւոր մերձաւորութեամբ սերման քանակութիւնը չնուազի աւելորդն արանդամէն ինքնին կը հոսէ. Ասի Սերմնահոսութիւն (Polution) կը կոչուի. Ասի բնական համարուի եթէ միայն երեք շաբաթն անգամ մը պատահի. աւելի յաճախ պատահած սերմնահոսութիւնը միշտ կամ մանաւոր պատճառներէ յառաջ կուգայ կամ զօրութեան կորստեան և ոպառման նշան է։

Սերմնահոսութիւնը միշտ պէտք է արգիլել. ուստի զանի յառաջ բերող ամեն պատճառ վերցնելու է։ Նա շատ հեղ ատամնքի ջախջախմանց լուծենէ և անշարժութենէ, հատ ու ջերմացուցիչ անկողիններէ, անբարեխառնքով՝ և մի և նոյն ատեն գլուխն և ոտքերն բարձր իսկ մարմինը ցած դիրքով պառկելէ, պնդութենէ, այլ և այլ հիւանդութիւններէ, մանաւանդ ամրձեաց և միզանցքի երկարատեւ բորբոքումէ կրնայ պատճառիլ։ Սովորաբար արշալոյսին ծագման միջոցին, երբ մարմինը իր գրգռանաց դադարթ-

նակէտին է ժամանած, նա կը պատահի։ Ուստի Ռուսաս կը խրատէ որ երիտասարդք ցերեկին 'ի բուն մարմնական բուռն աշխատանքներով լաւ մը յոգնին որով գիշերն քաղցր քնոյ մէջ ընկղմելով կարենան գրգռանաց դիմադրել։

Նա որ հեշտական մոլութեանց և մանաւանդ գիճութեան դէրի է եղած, սերմնահոսութեան պատահած միջոցին լաւ դիտալու է որ ասի իւր զեղխ ընթացքէն պատճառեալ անզօրութեան արդիւնքն է։ Իսկ երբ սերման շտեմարանը անդամ մը իր պարունակութիւնը արտաքսելու վարժուի, յայնժամ առանց գրգռանաց նաև սերմնահոսութիւն և արանդամի կանգնում տեղի կունենայ. այսպէս գրգիռը, բնականին նման, բոլոր մարմնոյ վրայ չբաժանուիր, այլ մարմնոյ այլևայլ մասանցն ազդելով զանոնք կը տկարացնէ և կը վնասէ։ Սակայն նաև միզանցքին դիւրգրգռացմանց մէջ բոլբոքում կայէ, որ անոր տեսակ մը հիւթ արտադրելէն, ցնցումներէն ու կանգման խիստ հակամիտ լինելէն կարտայայտի. ասիկա սերման շտեմարանացն և ամորձեաց հաղորդուելով նոքա կը տկարանան և գիշերային յաճախ սերմնահոսութեան առիթ կըլլան. այո՛, դիւրագրգռացց գործարանք այլ ևս չկարենալով սերմն իր շրջանացը մէջ զսպել մէզն և աղբն բնական կերպով մարմնէ արտաքսուած միջոցին նա ալ կը հոսէ։ Այս տեսակ սերմնահոսութիւնք խիստ վտանգաւոր են և պէտք է

ՊԱՏԿԵՐ Ե.

Բնութիւնը՝ իր օրինաց դէմ մեղանչողներուն ճակտին վրայ վրէժխնդրութեան կնիքներն կը դրոշմէ, որոնք քիչ առնէն բոլոր մարմնոյ մակերեւոյթը կը ծածկեն։

անմիջապէս վարպետ բժշկի մը դարմանին յանձնուին, եթէ ոչ քիչ առեն մէջ մարդուն բոլոր ոյժն ապառելով, մանաններն կը թուլնան, մարմնոյ զօրութիւնը կը հատնի, քայլերը դողդոջուն կըլլան, մարսողութիւնը կը խանգարի, շունչը դարշահոտ կըլլայ, աղիքներն չեն գործեր, շնչառութիւնը կը դժուարի, դէմքը կը ուժգունի և կը կապուտանայ, մրթին և ճակտին վրայ ծաղկի նման վէրքեր կը ծաւծկուին, բերանը կը լայննայ, քիթը կը ցցուի, աչքերն ապուշ հայեցուածք կունենան և կապոյտ օղակներով շրջապատեալ կըլլան, նա տխուր և տրտում լինի, շատ անգամ կը հառաչէ, առանց պատճառի կարտասուէ, աչաց լոյսն և յիշողութեան կարողութիւնը կը նուազի, միտքը գործելու կընդդիմանայ, երեւակայութիւնը անհիմն երկիւղներով կզբաղի. զինքը գերի ընող մոլութեանց վերաբերեալ ամենափոքր դիտողութիւն մը եղած առեն երեսի մանաններն ցնցելու պատճառ կըլլայ, ամէնալէն երեսներն կը կարմրին և աչքերն գետինը կուղղէ։ Այս թշուառ արարածը արանց և մանաւանդ կանանց երեսէն կը ծածկէ ինքզինքը, նորա բարոյական գանձն ապառած և հոգին խարտառ ճնշեալ է, գիշերային սերմնահոսութեանց պատճառաւ ցերեկը յետին աստիճան թուլութիւն մը կիշխէ իր վրայ, գլուխը կը ցաւի, ականջներն կը խօսին, ջիղերը կը ցնցին և մանական անդամալուծութիւն կսկսի։

Իրաց այս դառն վիճակին մէջ ալ աւելեալ սերմը կրնայ արտադրիչ կարողութիւն ունենալ, առողջ կին մը կրնայ այսպիսի մէկէ մը յղանալ, այլ աւա՜ղ, զի նորա անմեղ երախային վրայ անիծից դրոշմը կնքեալ պիտի ըլլայ։

Սերմնահատութիւնը ոչքան յառաջանայ, սերման տեսական արժէքն այնքան կը վատանայ. նա լոյծ և ջրանման հիւթի մը կը փոխուի, դեղնագոյն կամ կապտագոյն կըլլայ, մերձաւորութեան առեն բուն ժամանակէն յառաջագոյն կը հոսէ. այս պատճառաւ ոմանց արտէն ցանկական հրոյ բոցն կը մարի, կանգնումը տկարանան, անկատար կամ անհնար մնին։ Այս վիճակիս մէջ գտնուողն երկչոտ, անհոգ և ծերունիներուն պէս կըլլայ. վերջապէս մարմնոյ համայն կարողութիւնք զեղծուելով ընդհանուր անզօրութիւնը մարմնոյ և հոգւոյ կարողութիւնք խլպտա կը մարէ։

Իսկ երբ սերմը, առանց դրդռանաց, առանց արանդամի կանգման, առանց մէզի կամ աղբի բնական արտաքսման հոսի, յայնժամ նորա յարուցած վնասներն և վտանգներն բիւրապատիկ դառն լինին քան գիճութեան և այլ հեշտական մարութեանց պատճառած աղէտք։ Վա՜յ անոր որոյ ծնողական գործարանք այս տուիճան զեղծեալ են, նոքա մերձաւորութեան միջոցին անկարող են սերմը բաց օրինի ցայտել տալու, զի արանդամին կանգնումը իսկ վայրկենական և այլոց համար զուգաւորիլն անհնար է, զի սերմը՝ արանդամը

ՊԱՏԿԵՐ Զ.



Հեշտական շուայլութեամբ, մանաւանդ գիճութեամբ ամորձեաց պարկը իր բնական գիրքն և ձեւը կորսնցնելով թոյլ և անկենդան մարդի մը կը փոխուի։

դեռ իգամուտն չհասած կը հասի։ Ո՞ր գրիչը այս վիճակիս դառնութիւնը կրնայ ստորագրել, ո՞ր երեւակայութիւն այս դրութեան մէջ եղողին զգացումներն կրնայ նկարագրել։ Գիճութեան դերի եղող երիտասարդ մը ամուսնանալով ընութեան շաւղին մէջ քալել կսկսի, սակայն ի՞նչ է ատոր զգացածն և ո՞վ կրնայ թշուառ ըլլալու համար անոր հետ ամուսնացող օրիորդին զգացմանցը թարգման կանգնիլ։ Գուցէ այրը իրեն համար բոլորովին նոր եղող այս վիճակէն գրգռուելով ամենայն ճիգ գործադրէ ամուսնական պարտքն վճարելու, սակայն սերմը որոշեալ ժամանակէն առաջ հասելով, ցանկական հուրն կը մարի, զօրութիւնք կսպառին, ամեն ջանք ի զուր, և իր կնոջ ապառած քաղցր յոյսերն ի թերև ելլէ։

Ասինք որ երբեմն մարմնոյ զօրութիւնը կորսնցնող աղք արտադրիչ կարողութիւնը դեռ իրենց մէջ կը կրեն, և մինչեւ իսկ առողջ կին մը կրնան յղացնել, սակայն ի՞նչ տեսակ պըտուղ կը յուսացուի անոնցմէ — տկարակազմ և ախտաւոր մանկունք, որք առաջի տարիներուն մէջ մահուան հրեշտակին մանգաղին զոհ լինին։ Այս տեսակ մանկունք եթէ ապրին ալ զիրենք հեղինակողներուն մոլութեանց տիպն իրենց վրայ կը ներկայացնեն։ Ինչո՞ւ համար սովորաբար ապօրինաւոր ամուսնութենէ յառաջ եկող մանկունք դեղեցիկ, կայտառ և առոյգ լինին. զի նոքա զօրութեան կատարելութեան և եռանդուն սի-

ըոյ արդիւնքն են. այս դիտողութիւնը մինչև անգամ հիներն, մանաւանդ Արիսթոտէլ, ըրած էին։ Հէրքիւլէս, Ռոմուլուս, Ալէքսանդր, Թէմիսթոքլէս, Հոմէր, Դէմոսթենէս, Արթուր թագաւորը, Վիլհէլմ աշխարհակալը. և բազումք այլք, որ առողջութեան, գեղեցկութեան, կայտառութեան, զօրութեան և աշխուժութեան դիւցազանց տեղ են դրուած ապօրինի ամուսնութենէ յառաջ են եկած։ Ամենաքաջ զօրականք, ամենավեհ մտային կարողութիւնք, ամենահռչակ իմաստասէրք աղքատ և նուաստ խրճիթներէ են յառաջացած։ Ասոր պատճառը իրենց գոյութիւն պարգեւող սեռական արարից կերպէն և հիւթոց ու գործարանաց կատարեալ առողջութեան մէջ պէտք է փնտռել։ Նոցա արտադրիչ հիւթք և գործարանք ամեն եղծումներէ զերծ և ազատ էին։

Այս ամեն ըսուածներէն կը տեսնենք որ սերման աւերումը գիճութեան և այլ հեշտական մոլութեանց արդիւնքն է, և թէ և նա զուգաւորութիւնը բոլորովին չկրնար արգիլել, սակայն տկարաբար կամ ամուսնութիւնը անպտուղ կընէ և կամ այնպիսի էակ մը կարտադրէ որոյ համար կեանքը անիծեալ նուէր մ'է. երիտասարդութեան մէջ գործեալ ծածուկ մոլութիւնք և մեղք ծերութեան վիճակն դառնութեամբ լեցնելով անտանելի կընեն. այս տեսակ անձանց արտադրած խեղանդամ մանկան խիղճն թէև հանգիստ է, սակայն իրենք կապրին առանց երբէք հանգիստ գտնելու. անոնց խիղճը յաւիտեան կը տանջուի։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՄԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Երբ մերձաւորութեան արարքին ճշդիւ կատարուելէն ետեւ սերման աւերեալ լինելուն պատճառաւ տակաւին նոր էակ մը չ'գոյանայ. այն վիճակին Ամլութիւն կ'ըսենք իսկ երբ ծննդական գործարանք այնքան զեղծեալ ըլլան որ արանդամն անկարող լինի կանդնելու և հետեւապէս սերմը իգական ծննդական գործարանաց խորն չկարենայ թափանցել, այս վիճակին ալ Անկարողութիւն կանուանենք։ Անկարողութիւնը նաև կրնայ ծննդական գործարանաց ընդարձակ անկարգութենէ մ'ալ պատճառիլ, որ երկու կերպ լինի. մէկ մը ծննդական գործարանաց կազմութեան մէջ թերութիւն մը կրնայ լինիլ, և մէկ մ'ալ արտադրիչ զօրութիւնք պակասութիւն մը կրնան ունենալ որոնք երկուքն ալ մարդս անկարող կրնան ընել։ Կանանց անկարողութիւնը մի միայն ծննդական գործարանաց կազմութեան մէջ որ և է թերութենէ յառաջ գայ, ասի կրնայ բնաձին կամ պատճառեալ ըլլալ։ Սակայն այս երկու պատճառներն առաւել արանց քան թէ կանանց անկարողութեան առաջնորդ լինին զոր արանց ամուսնական վիճակին վրայ պաշտօնէն ետ կը հասկցուի. շատ ատեն կազմական թերթեւ թերութիւն մը մերձաւորութեան կրնայ արգելք լինել. չափազանց երկար արանդամն և թլփատին անձկութիւ-

նը նաև կրնան զանի արդիլել։ Գաւթին (տես Գաւ. 2 և 3) շրթանց կպչումն և կուսական թաղանդին խիստ անձուկ ըլլալն, արգանդին տարօրինակ դիրքն և երբեմն իսկ բոլորովին պակսիլը կամ նորա անցքը խցումը և կամ ձուարարներուն պակսիլն կանանց անկարողութեան առիթ ըլլայ։ Ոմանց կանանց ալ անկարողութիւնը իրենց բնութեան պաղութենէն պատճառի. հեշտական շուայլութիւնք և ապիտակ հատումը նոցա ներքին քոլոր փափաքներն կրնայ ջնջել։ Երկիւղ, քուռն խղճք, վատվռուն երեւակայութիւն և չզսպին գերդռումք և ամուսնոց առ միմեանս ունեցած անտարբերութիւնը ժամանակաւոր անկարողութիւն կրնան պատճառել։

Ամլութիւն և անկարողութիւն 'ի միասին կրնան պատահիլ երբ սերմն առանց արանդամի կանգման հասի. արդէն սերմն աւերեալ ինելով ապարդիւն մնայ, իսկ արանդամին թոյլութիւնը սերմը արգանդն չթափանցելուն պատճառ կըլլայ։ Այս տեսակը դժբաղդաբար ամենէն առաւելագոյն է։ Անկանոն պարբերական ունեցող, ինչպէս նաեւ կայտառ և գեր կանայք տոկտրաբար ամուլ մնան, այսպէս նաև սեռական կենաց մէջ շուայլութիւնը անկարողութեան կառաջնորդէ։ Իգական սեռին մէջ խիստ ծաւալեալ մղութիւնը, գինութիւնը, ամլութեան պատճառ է և դեղաբիթիթ օրիորդներն դեռ արբունքի չհասած դունդգադունդ 'ի գերեզման կը վարէ։ Այս նիւ-

թին վրայ Աշնան Տերեւոց Բ. տպագրութեան մէջ թէեւ խօսինք պիտի, սակայն հարկ է մի քանի խօսք ընել։

Այն օրէնքը որ մարմինը կատարելապէս զարգանալէ առաջ իրենց ցանկութիւնը պատ-ժելի ունակութեամբ կը յաղեցնեն դէպ 'ի տարտափելի հիւանդութեանց դէմն կելլեն. որոնց գունդին մէջ ամբութիւնը ամենէն թե-թեւն և մեղմն է։ Երկու սեռերուն ալ մի և նոյն եղող հիւանդութիւններէն զատ օրի-որդք մանաւանդ սա հեռեւեալ ցաւոց և ախ-տից կենթարկին. — դեղնութիւն, տամոքսի տկարութիւն, բուռն դլխացաւ, պիտակ հատում և այլ կծու և ցաւալի հատումներ, ծննդական դործարանաց աւերում, մարմնոյ և հոգւոյ կործանում։ Այս մարութեան դե-բի եղող օրիորդը ամուսնական օրինաւոր յա-բաբերութեանց և բերկրութեանց անիրաւ-լինի, մինչեւ իսկ՝ ամուսնանալէ եռեւ այն կենաց հաճոյքը պաղ և անհոդ կերեւի, ա-յո՛, գիտութեան այնքան վարժուեր են որ ա-մուսնական բնական արարքներն քարշելով և զզուանօք կը դիտեն։ Ուստի ծնողաց ուշադ-րութիւնը՝ քանի մը բոպէ ինծի կը հրաւիրեմ։

Աղջկունք 'ի միասին մէկ անկողնոյ մէջ քնանալն խիստ վտանդաւոր ունակութիւն մ'է. նաև ապատուհիք երկար առեն անոնց քնացած տեղը կենալու չեն, զի շատ օրինակ-ներով ապացուցեալ է որ ոչ թէ միայն այս անզգամները անոնց մէջ գիտութեան առա-

ջին որոմն կը ցանեն այլ նաև զանոնք այս գարշելի և մահաբեր մոլութեան մէջ կը վարժեն և կը կրթեն։ Անկանց գիշերօթիկ վարժարանաց մէջ գիտութիւնը շատ ծաւալեալ է, զգոյշ լերուք և հակեցէք։ Աւելի լաւ և օգտակար է որ աղջիկ մը գնդակ խաղայ, քան թէ լկտի վէպեր կարդալով գրգռի։

Այս մասին չենք ուզեր դեղեր տնօրինել զի տկարական հիւանդութեանց մէջ անգամ համբակներու դեղ յանձնելը մահուան հարուած տուող զէնք մը տղայոց ձեռքը իբր խաղալիք տալու կը նմանի. այո՛, մինչեւ անգամ ամեն բժիշկ այս մասին բանիւ և արդեամբ չէ կարող օգնել։ Ուստի զգոյշ լեր բժշկի ընտրութեան մասին. միայն այն բժշկին յայտնէ ցաւերդ որոյ վրայ կատարեալ վստահութիւն ունիս թէ ցաւոցդ մասին փորձառութիւն հաւաքած է. մի՛ դանդաղիր կարծելով թէ բնութիւնը ինքնին զքեզ պիտի բուժէ. ասի խիստ վտանգաւոր սխալ մ՚է. դանդաղութեամբ կորուսեալ ժամերն անհնար է եւ դարձնել. քիչ առենի մէջ ախտն անբուժելի լինի. ամլութիւնը և անկարողութիւնը անյաղթելի կըլլան, և դու կոչաս, կը զղջաս և կը հառաչես, բայց 'ի զուր և 'ի թերեւ։

ԳԼՈՒԽ Է.

ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

Երբ մէկը հեշտական մոլութեանց չափէն, սահմանէն և շրջանէն կանցնի, այնպէս որ, անդիտաբար կամ այլ եւս չկարենալով ինքզինքը սանձել և կամ բնութեան երկայնամտութիւնէն և համբերութիւնէն ալ քաջալերեալ, ախտաւոր անձանց աւելորդ ծննդական գործարանաց թունաւոր և փոխանցիկ արտադրանացը հետ ուղղակի յարաբերութեան մտնէ, յայնժամ բնութիւնը, խորագան 'ի ձեռին այն թշուառ մոլորելոյն վրայ յարձակելով, այնքան կը հարուածէ, որ նորա մարմնոյ արտաքին և ներքին անդամներէն և գործարաններէն մինչեւ մահուան ատիճան վրէժ առնելէն ետեւ միտքն և հոգին իսկ այն վրէժին արդար պատուհասներէն ղերծ և ազատ չեն մնար։ Վայ անոր որ անգամ մը բնութեան վրիժառու արտմտութիւնը և բարկութիւնը գրգռէ. վայ անոր որ քնացող առիւծն կարթնցնէ. նա ամենայն կատաղութեամբ անոր վրայ պիտի յարձակի և մէկ հարուածով զանի իր ճանկերուն մէջ առնելով նորա մարմինը և ոսկորներն իսկ պիտի փոշիացնէ։

Մեքանոթոքոքոմը բնութեան պատուհասներուն մին է որով նա հեշտական մոլութիւնք կը հարուածէ. ասի փոխանցիկ հիւանդութիւն մ'է, և զանի ունեցողներուն մեծագոյն մասն զայն ոչինչ կ'համարին և անոր ինչ լինելը

լուն և գարմանին նկատմամբ ամենայնմար և ծաղրելի գաղափարներ մարդկանց մէջ տարածուած են։

Ասի կը գոյանայ թէ չափազանց շատ անգամներ մերձենալէ, կամ չափազանց երկարատեւ զուգաւորութենէ և կամ այն ախտէն տանջուողի մը թոյնը այլի մը վրայ պատուաստուելէ, թէ և ոգեւոր ըմպելիքներէ, ձիարշաւէ, պաղ և թաց տեղեր երկար ատենները մնալէ, նեղ բանթերօններէ, մէջի պահարանաց հիւանդութիւններէ և շատ անգամ միզանց.քի հոտումներ կրնան պատճառիլ, սակայն ասի յետին ատիճան թուլամորթ և դիւրագրգիռ անձանց միայն կը պատահի, թէ և յարուցքուստ միզանց.քաբորբոքման կը նմանին սակայն անկէց էական կը տարբերին։ Պէտք է նաև մաշեցուցիչ ախտն և միզանց.քաբորբոքումը մէկզմէկէ որոշենք և զանազանենք. առաջինը միմիայն թոյնին ուղղակի արեան շրջանին հետ խառնուելուն կը ծնի, և ծննդական գործարանաց մորթին ճեղքուելէն կը պատճառի, սակայն միզանց.քէն բնաւ հոտում չտեսնուիր, բացի քանի մը կաթիլ շարաւէ։ Յիրաւի այս երկու ախտերն ալ միզանց.քին մէջ կսկին, սակայն մէկզմէկէ բոլորովին տարբեր և զանազան ախտեր և հարուածներ են։

Բացատրենք Միզանց.քաբորբոքումը։

Չափազանց յաճախ կամ երկար և անմաքուր մերձաւորութիւնք միզանց.քին թաղան-

դին ապաձեւ մանրեներուն մէջ բորբոքման կայծն կը ձգեն։ Ապաձեւ մանրեներուն հիւթ մ'արտադրելն արդէն գիտենք. արդ երբ նոքա բորբոքին սովորականէն առաւել առատ հիւթ կարտադրուի, որ իր բնական յատկութիւնն կորսնցնելով կաթիլ կաթիլ միզանցքէն դուրս կը հոսէ։ Ամեն բորբոքում արեան մանաւոր վայր մը հաւաքուելէն կը ծագի, հաւաքեալ արիւնը ոյն տեղ գտնուած անդամոց գործողութիւնը բուռն կերպով յառաջ կը մղէ, և մանաւանդ ջիղերն կը գրգռէ։ Արդ ծննդական գործարանաց նման անդամ մը, որ՝ այլ անդամներէ առաւել արեան երակներ և ջիղեր ունի, եթէ բորբոքեալ ըլլայ, յայտնի է որ նորա ազդեցութիւնը ամեն կողմ պիտի զգացուի. և յիրաւի խիստ տակաւ են այն հիւանդութիւնք որ եթէ զանոնք դարմանելոյ անիսյթ և անհոգ գտնուինք այնպիսի դառն պտուղներ յառաջ բերեն ինչպէս որ անդարման թողեալ միզանցքաբորբոքումը. տակայն զարմանալին սա է որ ճիշդ այս ախտը անիսդճաբար և անհոգութեամբ շատերէն անդարման կը թողուի։

Այս ախտին պատճառ եղող զուգաւորութեան թուականէն 6—15 օր ետքը (սովորաբար 9 օր ետքը հիւանդութեան պատգամաւորներն միմեանց կը յաջորդեն։ Երկրորդ կամ երրորդ օրը ջերմային նշաններ կը տեսնուին. գլուխը 'ի նեղքուստ կը ցաւի, քորը մարմինը տկար և անզօր կը մնայ, սառոյկ ծա-

բաւ մը զինքը կը տանջէ, որովայնի պնդութիւն կսկսի, միզանցքին մէջ տեսակ մը գըրգռիչ զգացում կըլլայ։ Հասուն մարդէ առաջ միզելն ցաւալի, մինչև իսկ անկարելի լինի, իսկ նա որ քանի մ՚անգամ այն ախտէն բռնըվեր է դրեթէ բնաւ ցաւ չզգար։ Հասուն մը առաջին օրերը նուազ և լոյծ է, սակայն քանի մ՚օրէն կը թանձրանայ և գոյնն ալ քանի մը կերպի կը փոխուի, որ բնաւ կարեւորութիւն չունի։ Շատ անգամ ախտը ծննդական գործարանաց ուրիշ մասերուն և անոնց մօտ գտնուող մարմնոյ այլ անդամոց ևս կազդէ։

Արշալոյսին դէմ արանդամի հզօր կանգնումք տեղի կունենան՝ որոնք մեծ ցաւ պատճառելով ախտաւորն անկոչնէն էլլել կտրիպեն։ Թլփատը շատ անգամ կուռի որով նա կամ եւ չկրնար մզուիլ (Phimosis) և կամ Սարը չկրնար ծածկել (Paraphimosis)։ Առաջինը բնական ալ կրնայ ըլլալ որ Թլփատին շատ երկար և խիստ նեղ ըլլալէն կը պատճառի, ասի մերձաւորութիւնը կարդիլէ և անկարելի կընէ, զի գործողութիւնք թերի կը մնան և սերմը Թլփատին անցուկ բերնէն չկրնար ցայտել։ Շատ անգամ ալ ասոր հետ Սարի բորբոքում կընկերանայ. ասի վտանգաւոր չէ զի Սարին շուրջի ոսպաձև մասանները Թլփատէն ճնշուելով չափէն աւելի դեղնագոյն հիւթ մը կարտադրեն. առօրեայ լուացմունք այս հիւանդութիւնը շուտով կը բուժեն և Թլփատն ալ ձեղքելով այս անկարգութիւնը կը վերջանայ։

Այսպէս ամուսնական արարքին արգելք եղող այս թերութիւնը լոկ վերաբուժական գործողութեամբ կը բուժի։

Գալով երկրորդ անկարգութեան՝ այսինքն երբ թլխատը չկրնար Սարը ծածկել, պէտք է ըսենք թէ խիստ յաւալի վիճակ մ'է, և եթէ անփոյթ թողուի վտանգաւոր կրնայ ըլլալ, հոս բժշկին և վերաբոյժին դիմելու է։ Այս վտանգաւոր հիւանդութիւնը Սարին ուռելէն կը պատճառի, Սարին ուռելն ալ մերձաւորութեան չափազանց երկար տեւողութենէն կը հետեւի։ Ուստի ճարտար բժշկի մը դիմէ, զի տրա հետեւանք խիստ ծանր կրնան և քու բոլոր ջանքերդ ծաղր կրնեն։

Ուրիշ վտանգաւոր և աղետալի հիւանդութիւն մ'ալ Ամորձեաց ուռելն և բորբոքելն է։ Ամորձեաց պարկը կը կարմրի, խիստ ցաւոյն լինի կուռի և որքան որ Ամորձիք ուռին այնքան կը ձգտին և կը ցաւին. երբեմն անոնք խիստ ուռելով որովայնին տարին կողերուն ցաւ պատճառեն։ Այս հիւանդութիւնն ալ անփոյթ լինելով անկարողութիւն կը հետեւի և Ամորձիք շարաւելով և աւելի վերբերով ծածկուելով վերջապէս կ'ոչնչանան։

Միզանցքէն հոսող հիւթը առատանալով բորբոքեցուցիչ կըլլայ, յետոյ Արանդամը չբակարեն ալով ուղիղ դիրքն պահել ծուռ կանգնում կունենայ. ասի թէ և ժամանակաւոր հիւանդութիւն մ'է, սակայն շատ ցաւ կը

ՊԱՏԿԵՐ Է.



Հեշտական շուայլութեամբ ամուրձիք բորբոքելով կուռին և ջարաւելով Ի վերջոյ կը փճանան ։

պատճառէ և սովորաբար դիշերը կը պատահի. երբ բորբոքումը խիստ չէ, հիւանդը միզած աւուրը լոկ միզանց.քի ջերմութեան հետ ընկերացած հոտում կունենայ, ապէ զատ բորբոքեալ մասանց մերձակայ անդամք այնպիսի ցաւ կրպան որպէս թէ սուր դորձիքով մը զանոնք կը ծակեն և միսին կտորներն քաշելով կը փրցնեն, իսկ ծնկանց ու մարմնոյ այլ մասանց վրայ ուժաթափութիւն կը տիրէ։

Մինչեւ ցարդ բուսածներուն ամենն ալ միզանց.քաբորբոքման հետեւանքներն են. սակայն այս չէ բորբը. նա մէջին պահարանին վրայ ալ ազդեցութիւն ունի, և զանի ալ կը բորբոքեցնէ. ասի ծանր կէս մ'է. նա այնքան ցաւ կը պատճառէ, միզելու կարողութիւնը այնքան կարդիլէ, և այնքան անասանելի նեղութիւն կուտայ, որ սոյն ատղուկին վիճակին մէջ եղողը անպատճառ բժիշկին պիտի ապաւինի։ Երբեմն միզանցքն ալ բորբոքելով միզելը, ամենամեծ հարկաւորութիւն զգացուած առանն անդամ, գրեթէ անկարելի կըլլայ, մէզը կաթիլ առ կաթիլ կը հոսէ. այս վիճակիս մէջ գտնուողն հապա թէ 2 կամ 3 ժամ կրնայ.քնանալ, երբեմն միզանց.քը այնքան կը նեղնայ որ անհնար կըլլայ միզելն առանց արուեստական կերպով խցեալ անց.քը բանալու։ Հապա ալ եթէ անհոգութիւն ցոյց տրուի ախտը յաւերժական և մնայուն կըլլայ և կեանքը տաղտկալի և ձանձրալի բեռ մը կընէ. ուստի աճապարելով խոհուն բժշկի մը դիմելու է։

Առանցքն զատ միզանց.քաքորքութիւնը ամբողջ մարմնոյ կազդէ, ծննդական գործարանքը կը տկարանան, ջիղերն կը թուլնան, հիւթերն սպառելով մարմինը զօրութենէ կ'ինայ։ Իսկ եթէ հատուածը դեղով կամ պաղելով դադարեցուս ըլլայ դառն հեռեւանքներ կը ծնին, տուիրաբար ուռայ և ծնկան յօդերն կուռին, անդամք կը ցաւին, մարթն կը թուլանայ, ջերմ, անքունութիւն, անախորժութիւն և այնքութիւն կը յաջորդեն, և եթէ ցաւը նեղքին գործարանաց հաղորդի, թշուառ արարածը մահուան քունը կը քնանայ։

Իգական ծննդական գործարաններն աչ արտանին նման քորքոքով հիւթ մը կարտադրեն որ Սպիտակ Հառամ կը կոչուի, ասի արտան սեռին միզանց.քաքորքումն դրեթէ նման է, սակայն անոր չափ վտանգաւոր չէ, զի իգական միզանց.քը արտանին պէս կարեւոր չէ, սակայն և այնպէս ասի ալ անհոգաբար անդարման թողլով վտանգաւոր հեռեւանաց պատճառ կրնայ ըլլալ։ Ա.յս ախտալ սեռական կեանց մէջ շուայլութենէ, փոխանցուելէ և գիմութենէ ծնունդ կառնու. այս վերջինը ոչքան որ արական սեռին, նոյնպէս ալ իգականին մէջ ծաւալեալ է, ինչպէս որ պիտի տեսանենք Աշնան Տերեւներուն Բ. տպագրութեան մէջ։

Խիստ ծանրակշիռ ախտ մ'է միզանց.քաքորքումը. ասի նորա պատճառած դառն հեռեւանքներէն տեսանք, ուստի ուշադրու-

թիւն և հոգատարութիւն. սակաւ են այն հիւանդութիւնք որոց անփոյթ լինելով մարդս այնքան թշուառ ընէ որքան որ այս ախտը։ Արդ հարկ ըլլար դեռ չտարածուած փուրթ մաքրել, եթէ ոչ նա շուտով հրդեհի կը փոխուի և զանի մարելու համար ամէն ջանք 'ի զուր և ունայն կըլլայ։

ԳԼՈՒԽ Ը.

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ԲՈՐԲՈՔՄԱՆՑԸ ՓՈԽԱՆՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՐՄԱՆԸ

Ընդհանուր առմամբ Սպիտակ հատամ ունեցող կանանց մերձաւորներն միզանց.քաքորբոքման ախտը կը ժառանգեն և փոխադարձաբար միզանց.քաքորբոքում ունեցող մարդը առողջ կնոջ մը մերձենալով զանի սպիտակ համան կենթարկէ։ Սակայն ասի ամէն պրպտդայի մէջ գործադրելի օրէնք մը չէ. հեշտական զեղխութիւններով թուլցած երիտասարդ մը առոյգ և զօրեղ կնոջ մը հետ ամուսնանալով իր ունեցած սակաւ ինչ զօրութիւնը այնքան կը ձգտի որ միզանց.քի բորբոքման կը հանդիպի։ Հոս հարկաւ փոխանցութիւն կամ տարբերութիւն չկայ։ Քանի որ միզանց.քաքորբոքումը աչաց, ականջաց և քթին վրայ ևս կրնայ պատահիլ եթէ այն հոսանքը

արտաուրեալ մատերով նոյն զգայարանքներն շօշափուին։ Մանաւանդ աչաց նման փափկաշէն անդամ մը սոյն թոյնով խիստ դիւրաւ կը վնասուի. երբ այն հոսումէն փոքր ինչ աչաց դպչի, նոյն տեսակ հիւթ մ՚ալ աչքէն հոսել սկսելով աչքը կը շարաւի և քիչ առեն էն կոչնչանայ. ուստի հիւանդ անդամն և անոր լաթերն շօշափելէ ետև պէտք է ձեռքերն խկոյն լաւ մը լուալ։

Ոչ ոք թող ինքզինքը խաբէ խորհելով թէ առանց բժշկի դիմելու ինք պիտի դարմանէ զանձն. ասի մեծ սխալ մ՚է որով կեանք և երջանկութիւն վտանգի տակ կը դրուին. եթէ բժշկական դարմանի կարօտ հիւանդութիւն կամ ախտ մը կայ ան ալ այս է։ Պարզ դեղ մը համբակին ձեռաց մէջ թոյնի ազդեցութիւն կունենայ, քանի որ նա բժշկին ուսումնութեամբ ըր ըստ պիտոյից և պահանջման դործածուելով կենսատու նիւթի մը կը փոխուի։ Տգէտին ձեռքով եղած ինժէքսիոնները միզանց-քին խըցմանը պատճառ կրնան, իսկ փորձառու բժիշկը անով մեծ հրաշքներ կը գործէ, մինչև իսկ պաղ ջրով լուացուիլն առանց բժշկի ընտրութեան վնաս կրնան տալ։ Ա. յս պատճառաւ անհնար է մեզ հոս դեղագիրներ հաղորդել, զի այս հիւանդութիւնը և ախտը միայն բժիշկի է վերապահեալ, հոս միայն մինչև բժիշկին դալը նախագդուշական և նախապատրաստական դարմաններով բաւականանանք։

Մենք դեռ դործարանաց դրդռեալ և բոր-

բոքեալ վիճակը բոլոր մարմինը հանգստեան կը հրաւիրէ. ապի չնկատողին ամորձիքներն և ա կը բորբոքին և կուռին, և հիւանդութիւնը կերկարի։ Ուստի հարկ չեղած տեղն պէտք չէ շրջապայիլ, ձիարշաւ ընել, կառքով ճամբորդել, պարել և դործել։

Խիստ զգոյշ ըլլալու է պատ առնելէ. հոլ եղած տեղն բացօդեայ տեղերն միզելու չէ, երբ միզած տեղն խթիչ խիստ ցաւն ակի՝ գաղջ ջրով հիւանդ անդամը լուալու է, նաև մէզը միզանցքին ցաւ չպատճառելու համար պէտք է առատապէս մեղմ, խժային, ահուն և ալիւրախառն ըմպելիքներ խմել. չըլլայ որ խմելիքն գրգռիչ, թթու կամ ոգելից ըլլայ։ Սուրճ և թէյ իսկ հիւանդութեան առաջի օրերը ուղիկ չէ դործածել։ Կերակուրք պարարտ, աղի, համեմեալ կամ թթու, դժուարամարս և հատուէտ պէտք չեն ըլլալ։ Փորի պնդութեան համար խաշած տալորն և մեղրը աւելի օդտակար են քան թէ լուծողական դեղերն։ Եթէ անոնք օդուտ չընեն, երկու խահուէի դդալ Electuarinm Londinense խմէ։

Ամորձեաց ուռիլն արդիլելու համար պարկ մը (Suspensorium) պէտք է դործածել, պէտք է խիստ զգուշութեամբ վարուիլ անոնց հետ, նատած տեղն պուէնքներն միմեանց վրայ պէտք չէ անցընել, նեղ բանթալօններն ալ զանոնք կը ճնշեն, կը նեղեն և կը վնասեն, առաւօտեան կանուխ գրգռանց դիմադրիչ միջոցը անկողնէն անմիջապէս ելնելն է։

Երբ Ամուձիք ուռին պէտք է զանոնք մինչեւ բժշկին գալուտը տաք պահել. հեռու կեցիր ամեն սպեղանիներէն և օձիչ խուզերէն. պատէ մինչեւ բժիշկը գայ։ Անձնաբուժութիւնը հոս ալ խիստ վտանգաւոր է, զի Ամուձիք կը քարանան, ծնողական կարողութիւնք խաբանին և ջնջուին։ Ասի բժիշկէն իսկ գաղտնի պահելուն նման ծաղրելի յիմարութիւն չկայ. թշուառ արարած, արտաքո՛ բժիշկին մարդ խրկելու և կանչելու, որ անթիւ չարեաց, ցաւոց և ապերախց մէջ չէիցաս։ Եթէ արտօրեան թէ ժամանակ և թէ դրամք քիչ կը վատնես, իսկ եթէ անիրաւ լինիս հիւանդութեան ժամանակը կերկարի, հեռուապէս բժիշկն ալ երկար ատեն գալով և դեղեր տալով հրամայելով թէ ծախքդ և թէ հիւանդութեանդը տեւողութիւնը բազմապատկուի։ Նաեւ յիմարութիւն է խորհել թէ միզանց.քաբարբռումը ինքնին կանցնի և կը բժշկուի և թէ ապեղից ըմպելիք զանի կանհետացնեն. այսպիսի դէպք մը դեռ պատահած չէ և չի պիտի պատահի. այս ախտը ուրքան երկարի այնքան կը տկարանան ծնողական գործարանք և նոցա հետ տերտ յարաբերութեան մէջ գտնուող մարմնոյ բոլոր ջիղերն և անդամներն։ Զգուշ լեր. չըլլայ որ այս յիմար և ծաղրելի երեւակայական գնաքին զահ երթաս։

Դատապարտութիւն և ծանր պատժոյ արժան են անոնք որ միզանց.քաբարբռումամբ և ապիտակ հոսմամբ կը տանջուին և զանի ոչ

թէ դաղանի պահեն այլ նաեւ ամուսնական յարաբերութեանց եւս կը մնեն. ասոնք ոչ թէ միայն ուրիշ անձ մը կը թունաւորեն այլ նաեւ այն ախտը իրենց արուադրած մանկին վրայ կը պատուասուեն։ Ա. յոգիսնք ամուսնանալու չեն մինչեւ որ չբժշկուին. այս ախտն ունենալով ամուսնացողը անբարոյական, զզուելի եւ պժգալի անձ մ՝է. խորհէ մէյ մը, ո՛վ անփորձ եւ անխորհուրդ, անզգայ եւ տղայամիտ դու, ո՛րքան ամուսնութիւնք այն անզգուշութեամբ թշուառութեանց վայրի մ՝են փոխուած. երեւակայէ այն անթիւ, անմեղ մանկունքը որոց դէմ այս եղեռնական յանցանքը գործուած է. վրէժ, վրէժ կաղաղակեն անոնք յերկինս, անմեղութեան եւ արդարութեան դատաւորին առեանը։

Երբ վիզէն արդիլուի առանց ժամ եւ վայրկեան անցնելու բժիշկին դիմելու է. անհոգութեան պատուղը խիստ թանկ ծախուկառնուի. ինչ որ այս վայրկենիս կրնաս գործադրել յաջորդ ըսպասէին մի թողուր. "դիշեր է", "մութ է", "առաւ ըլլայ եւ հապա կերթամ" ըսող հիւանդը թող գիտնայ որ արշալոյսը ծագելուն գերեզմանը իր առաց տակ բացուած պիտի տեսնէ. իսկ "վաղը կաւ գամ", "գործ ունիմ", "ժամանակս չնեցէր" ըսող բժիշկին անունը բժշկաց ցանկին 'ի սպառ զեղծելու եւ տիրոջմն իսկ առնելու եւ այրելու է։ Եթէ անմիջական օգնութիւն չհասնի մեզի պահարանին ջղաձգութիւն (զբազմ°) կը-

կան։ Իսկ մինչ բժիշկին դալուստն կանէին հունտէ ալիւրը կամ թրով կամ ջրով եփելով խիւս շինելու է և երկու լաթի մէջ առնելով արանդամին և մէգի պահարանին մէջ տեղ գլուխնուղ միջոցին վրայ դնելու է։ Քաթէոլիր կոչուած գործին եւս պէտք է Միզանց.քին մէջ անցնել, սակայն ասի բժիշկին և մի միայն բբժիշկին պաշտօնն է, զի համբակն և անդէտը այս գործիքովն ինքզինքին չարաչար վնաս կը պատճառէ. սիրալ կամ անզգուշ գործածութեամբ անով Միզանց.քին .քովը ուրիշ անց.ք մ'ալ կը բացուի, որոր հետեւանքն լինի մեզելու անկարելիութիւն, և Քաթէթերի շարունակական կարեւորութիւն, որով Արանդամը և ծննդական գործարանաց այլ մասունք կը դրգռին, կը բորբոքին, մէգն շարունակ կաթիլ կաթիլ կը հոսէ, հիւանդը կը գարշահոտի, ամէն մարդ անկէ կը խորշի և իրայ կուսաց 'ի վերջոյ կանխահաս մահը նորա անտանելի և տաղտկալի գոյութեանը վերջին հարուածն կուտայ։

Իգական ծննդական գործարանաց ջղայնութեանը համար Սպիտակ հոտոմը առաւել եւս գժուարաբուժելի է և երկարատեւ քան թէ միզանց.քաբորբոքումը. ուստի նորա աւելի ուշադրութիւն և զգուշութիւն պէտք է. նաև մարմնոյ վրայ ունեցած նորա վատ ազդեցութիւնքը խիստ մեծ լինելուն համար ոչ թէ միայն բժշկի դիմել հարկ է այլ ամենահմուտ, ճարտար և խոհուն բժիշկ

մը պէտք է ընտրել, զի եթէ փոքր ինչ երկաթի ախտը, անբուժելի մնի, զօրութիւնը կը նուազի և կորսուի. դէմքը մռայլոտի և դըժգոյն կըլլայ, դժգոհութիւն, թուլութիւն, երկչոտութիւն և յուսահատութիւն զինքը կը պաշարեն, սեռական կենաց զգացմունք կանհետանան, լակ նորա խորհուրդը կը զրուեցնէ զհիւանդը, նորա մերձեցողն կամ միզանցքաբորբոքման կը հանդիպի կամ անպտուղ և ապարդիւն մնի այն յարաբերութեամբը։ Թոքախտ և Ջերմ կրնան մահն ժամանակէն առաջ հրաւիրել։

Սրդ ընթերցող, սե՛ռ վտանգն, սե՛ռ մահուան մանգաղն և այնպէս շարժէ այս երկու ապտակների սխտերին բժշկութեան համար. մի դանդաղիր, որքան դու դանդաղիս այնքան վտանգն և մահն կարագայ և արագշարժակի վրայ։ Զըլլայ որ պատս կանանց և դպրեակաց դեղերուն ապաւինելով անձդ այնքան վնասես որ բժիշկն ա՛ս ահաւելի "ալ յոյս չկայ" խօսքը ըսես. խորհէ թէ ինչ ծանր խօսք մ՚է այս. "ալ յոյս չկայ քեզի համար". "աշխարհիս դեղերն քեզ համար ազդեցութիւն չունին". "դու կենդանի էակաց ցանկէն արտաքսեալ ես և մահուան հրեշտակին սեփնեբուն մէջ արձանագրեալ ես քու անունդ"։ Ասոր նորէն կը կրկնեմ դեռ ցաւն թեթեւ եղած բոլորէին սովորական բժիշկին դիմէ։

ԳԼՈՒԽ Թ.

ՄԱՇԵՑՈՒՑԻՉ ԱԽՏ

Հեշտական մոլութեանց յառաջ բերած դառն հետեւանաց վրայ անցեալ գլխոյ մէջ խօսեցանք. կը մնայ այժմ նոցա պատճառած էն ապրանքի ախտին վրայ եւս քանի մի խօսք ընել։ Սա իրաւամբ "մարդկութեան խարազանը" կը կոչուի, զի չկայ ախտ, չկայ հիւանդութիւն որ մարդս ատր չափ պատուհասէ, հարուածէ, աւերէ, կործանէ և մարդկութեան ձեւէն և ատիճանէն մերկացնէ։ Հոս կերեւի բնութեան արդարութիւնը իրեն օրինաց դէմ մեղանչողներէն վրէժ առած առեն, գիտութիւնը բնութեան դէմ ամենածանր եղեռնագործութիւնը լինելով ամենախիստ պատժոյ կենթարկուի, և թէև նորա հետեւանքն 'ի սկզբան աննշան են, սակայն 'ի վերջոյ ամենածանր կերպարանք ը կզգենուն։ Մաշեցուցիչ ախտը (Մաշողական, Գազգիական ախտ. Syphilis) բնական օրինաց շրջանին մէջ կատարուած եղծումի լինելուն համար թեթեւագոյն պատժոյ կարժանանայ, և թէ և իր հետեւանքներն խիստ շատ կարուցյցուին, և մարդուս ուրտուա և սարսափ կը պատճառեն, սակայն գիտութենէ դիւրագոյն կրնան բժշկուիլ։ Այս ամենայնիւ, լաւ միտ դիր, չկայ հիւանդութիւն մը կամ ախտ մը որ անհոգութեամբ և անխուժաբար թողուելով

այնքան աւերուին և կործանուիլ կը պատճառէ ինչպէս Մաշեցուցիչ ախտը։

Այս սարսափելի ախտը ԺԸ դարուն վերջերը Նոր աշխարհէն Եւրոպա փոխադրուեցաւ. անկից առաջ անոր անունը չէր լսուած։ Սպանիացիք Ամերիկան գտած առենին Հընդկուհիներէն ժառանգեցին զանիս և Եւրոպա բերին. զանի բուժելու բնաւ դեղ և դարման չկար և սոսկալի մահուամբ կը վերջանար։ Նա Սպանիան Անգլիա, անկից Իտալիա և Գերմանիա անցաւ. Գերմանացիք զանի Գաղղիացուցմէ ժառանգելուն համար Գաղղիական ախտ կոչեցին զայն։ Առաջին անգամ Նաբոլիի մէջ արդիկը տարտ դեղի տեղ գործածուեցաւ. Լաս Գազաս Ամերիկայի Հնդիկներուն մէջ այն ախտին սկզբնաւորութիւնը սարսէս կատարէր։

"Սպանիացիք Կուանահանի մտած առենին գտան որ բնիկ արուներն անզօր, թոյլ և ծոյլ էին, ընդհակառակ իգական սեռն առոյգ և կայտառ լինելով սեռական կենաց խիստ հակամիտեալ էին։ Ասոնք իրենց թոյլ և անհոգ այրերն յինքեանս գրգռելու համար մեծ ժեղներ բռնելով.քնացած առեն նոցա Արանդամի Սարերն խայթել տային. այն անգամք ուռելով կը գրգռուէին և չափազանց եռք մը կը գոյանար հոն, զոր անցնելու համար արք ինքզինքնին չափէն առաւել սեռական կենաց կը նուիրէին։ Թունալից խայթն, չափազանց զուգաւորութիւնք, Ջերմ կլիման և անմաք-

բուլթիւնը միանալով ուռեցքներն վերբերու
կը փոխէին որոնց թունալից հիւթն Հնդկու-
հիներուն վրայ փոխադրուելով ասոնցմէ ալ
Սպանիացւոց փոխանցուեցաւ »։

Ասի յայտնի ցոյց տայ որ մաշեցուցիչ ախ-
տը մէկէն ուրիշի մը կը փոխադրուի, թոյնը
արեան շրջանին հաղորդուելով, իսկ թոյնը
արեան շրջանին հաղորդողք են Արանդամին
վրայ նուրբ ձեղքուածքներ, զի մինչեւ որ
միտը չձեղքուի անկարելի է որ թոյնը արեան
շրջանին մէջ մնայ, և ոյն ախտը ոչխոց վրայ
փոխադրուի։ Ամեն մերձաւորութեան առեն
Արանդամի ոչոսխի նուրբ ձեղքուածքներ
տեղի կունենան թէև անոնք աչաց անտեսա-
նելի են։ Սոյն ախտով տանջուողց հետ ա-
մուսնական յարաբերութեան մտնելէ 3էն
մինչեւ 20 օր յետոյ Սարին վրայ կարմիր կէտ
մը երեւան կելլէ· ոսի կուռի և կը մեծնայ
և կը ծակի, ոսի ալ մեծնալով լուբիայի չափ
վէրք մը կը գոյանայ, մերթ կլոր, մերթ որ-
ձեւ եզերքներով, մերթ կարծր և մերթ կա-
կուղ, մերթ կարմիր, մերթ դեղին, ուսկից
դեղնագոյն շարաւ կը հոսի։ Այս վէրքերն,
որ չգիտցողին անվնաս թուին, շանքրոր կը
կոչուին և յաշեցուցիչ ախտին նախնական ե-
րեւոյթներն են։

Անոնք իրարմէ երեւոյթով կը տարբերին,
սովորաբար Սարին եզերքներն կերեւին ուր
Թլխատը Սարին հետ կը միանայ, նաև մի-
զանցքին շուրջն ու մէջը· շատ հեղ ալ մա-

տերուն միջոցաւ թոյնը աչաց, քիթին ականջին, բերանին և ատաց մտերուն մէջ տեղը կը փոխադրուի ու թոյն տեսակ վէրքեր կը գոյանան։ Շատ մարդկանց վրայ այս վէրքերն շատ մը 'ի խորն թափանցելով կսկսին աւերմունք և կործանումք շատպաւ յառաջ տանել, այլոց վրայ անոնք կը կարծրանան և սատիկ ցաւ կը պատճառեն, այլոց մարմնոյ վրայ ալ սոյն վէրքերն փոտեցուցիչ շարաւ մը կարտադրեն որք եթէ մաքուր չպահուին և լաթով կամ կտաւաթելով (շարբի, թիֆթիկ) չ'ծածկուին գպած տեղն նոյն տեսակ վէրքեր կը գոյացնեն այնպէս որ մի և նոյն մասին վրայ խել մը վէրքեր կը գոյանան։ Նոյն վէրքերուն ամենքուղն որու հետ որ սեռական յարաբերութեան մտնէ զոյն ևս կը թունաւորէ։ Նոյնատեսակ վէրքերն ալ յառաջ գան նաեւ քոյոց վրայ. ասի ձայնի կոչութենէ, վիրի ջերմութենէ և կուլ տալու դժուարութենէ կիմացուի։ Ասոնք խիստ վտանգաւոր են և մնաշկին փոտեցնելով մեծ աւերմունք գործելէ զկնի ձայնը ևս կայլայլեսնեն և զզուելի կրնեն։

Ա. յս չէ ամենը. վիրաւոր մարդոյ վրայ եթէ ծծիչ երակ մը գտնուի, թոյնը՝ անկէց ծծուելով ծննդական գործարանաց բունին կը հաղորդուի ու բաւական մեծկակ ուռ մը կը գոյանայ. ասի պուշտο կը կոչուի։ Դեռ ուռն չգոյացած նոյն կողման մարթին գոյնը կը թըխանայ, հոն դուրս ցցեալ կէտ մը կրնայ շոշափուիլ, ցաւ մը կսկսի. ուռն բացուիլ և

ՊԱՏԿԵՐ Ը.



Գուգպ կոչուած Գալաբը.

շարան արտաքին կուզէ. նոքա երբեմն իրենց շուրջը կը փաթեցնեն և կամ հիւթոց շարաւի վերածուելովն մարդկանց զօրութիւնը կապառեն և զանի 'ի գերեզման կառաջնորդեն։

Սրանդամն քանի մի տեղէ վերատրուած առեն Պուպո, Շանքեր և միզանց.բարբրքուտ 'ի միասին երեւան կելլեն. շատերն կը կարծեն թէ ասի պաղ առնելու արդիւնքն է։ Սակայն ախտին առաջին առաթնանն է այս, որ եթէ անփութաբար անդարման թողուի, թոյնը արեան բոլոր շրջանին հաղորդուելով կարգ մը նոր հիւանդութիւնք կը ծնանին որով մարմնոյ արտաքին մասին, քսոց և կոկորդին, մաշկին, աչաց. բերանին և քթին եղերքներն մաշեցուցիչ վէրքեր կը գտնեին. ասի այն ախտին երկրորդ առաթնանն է։

Թոյնը արեան շրջանին մէջ մտնելուն առաջին հետեւանքն է ծաղկաձեւ և ապնդանման վիրաց (Բոնտիւլոմ) գոյանալն։ Առնք Շանքերի նման Սարին, Միզանց.քին բերանը և Թլխատին վրայ կը գտնեին, նաև ապրին ապիքին բացուածքին և բերանին եղերքները կերեւին։ Նոքա զարհուրելի երագութեամբ կածին, շատ անգամ չափազանց կը մեծնան, հիւթ մը կարտադրեն և մարդս խիստ կը նեղեն և կը տանջեն։ Անոնք դիւրաւ կարիւնին կը շարաւին և ձեւով և գոյնով մէկզմէկէ կը զանազանին։ Այս վէրքերն խիստ դժուար է հեռացնել, կարելն, այրելն և կապելն օ-

գուտ չանի, զի անոնց պատճառը արիւնին մէջն է։

Քօնռիւլօմներն պահ մը եաք կարմիր վէրքերու կը փոխուին, որոնք ամբողջ մարմնոյ վրայ, մանաւանդ դլխուն, ճակտին, վզին, կուրծքին, կողերուն, որովայնին և ուսոց արտաքին մասին մարմն կը ծածկեն. այս վէրքերն մի քանի աւուր մէջ մարմէն կը բաժնուին, տեղերնին կարմիր և թաց վէրքերու ապիներ թողլով։ Անոնք սաստիկ եռք մը կը պատճառեն և հիւանդն կը դժդոհ և ջանայ զանոնք քերելով հեռացնել. սակայն ո՛րքան որ հիներն քերուելով հանուին այնքան խոշոր և թանցը նոր վէրքեր կը գոյանան։ Ոմանց վրայ ալ այս վէրքերն թխադոյն կարմրայտ և ցաւ տուող ապիներ ձգելով կանհետանան և մարմնոյ այլ կողմերն երեւան ելլեն. այնպէս բոլոր մարմինը այն ապիներ ծածկուելով ախտաւորին մարմը ճիշդ վագրի մաշտակի նմանի։ Նաեւ ախտին այս եղկելի տատիճանին մէջ է որ քամոց և կոկորդին կողմերն վէրքեր ելնելով քիչ օրերէն զանոնք կուերեն և կեղծեն. եթէ շուտով դարման չգտնուի ախտաւորն սարսափելի ցաւոց կը մատնուի և ձայնը ցկեանս աւրուած և փոխուած մնայ։

Մինչև ցարդ ցոյց տրուած անուանելի ցաւերն բաւական են ապացուցանելու թէ Սեռական կենաց օրինացն դէմ մեղանչողին պատիժներն ահռելի են. սակայն ասոնք բնութեան վրէժին չափն դեռ չէ կատարուած.

ՊԱՏԿԵՐ Թ.



Հեշտական մոլութիւնք մարդուս մարմինք պալարներով կը ծածկեն։

պատուհասից, անիծից և հարուածոց՝ շուեմաբաններն տակաւին չեն ապառած. այո՛ վերն յիշեալներն դեռ պատիժ կամ պատուհաս չեն սեպուիր. նոքա լոկ յանդիմանութիւն, խրատ և ապառնալիք են, որոնցմով բնութիւնը մարդուս քանի մ՝անգամ ազդու ազդարարութիւններ ընելէն զկնի՝ երկիւղալի, ահարկու և աննկարագրելի պատուհասներ և անէծքներ կը տեղացնէ անոնց վրայ որք իր ազդարարութիւններն ծաղրելով իրենց անօրէն ընթացքին մէջ կը յարատեւեն և դաշոյնը մինչև սիրտը կը մղէ և յանցաւորին կեանքը կը պահանջէ։ Եթէ ախտը իր երկրորդ աստիճանին մէջ չ՝բուժուի, աւելիչ թոյնը այժմ մորթը կը թաղու և բնութիւնը կսկսի իր անէծքներուն նեռերն մարմնոյ այլ մասանց ուղղել. որով մարդկային փտաւոր մարմինը, Աստուածային այն որբաղան տաճարը, քաջմեկի և զզուելի դիակի, այո՛, կենդանի և ապրող դիակի մը կը վերածի, ինքը իր անձին և մարմնոյ վրայ զզուանօք և դարշելով կը նայի և այլք կը տսկան և կը զարհուրին և կը սարսին ըզհարուածեալն և զպատուհասեալն և զանիծեալն տեսնելով. ահ, թշուառութիւնը հոս է. հոս է յուսահատութեան բուն կեդրոնը. հոս է անէծք Աստուածային, անէծք բընութեան, անէծք խղճմտանաց. ամօթ և երկիւղ զինքը կը հալածեն. բնութեան երկայրի թուրն, մաշեցուցիչ ախտին թոյնին մէջ թաթխուած, զինքը կը հալածէ, ուսկից ըն-

դունուած ամեն մի վէրք նոր թշուառութեանց ծննդեան պատճառ լինի. մահ և միայն մահը այս թշուառը կրնայ ազատել. ազատել ասի, ոչ. մահը նորա աչքերն ժամանակուոր անէծքներու մէջ վայր մի խփել տայ անվերջանալի տանջանաց մէջ զանոնք վերատին բանալ տալու համար։ Անհաւելի նկարագրութիւն, սակայն դժբաղդաբար բառ առ բառ յիրաւի էրողութիւն։

Այս է մաշեցուցիչ ախտին երրորդ աստիճանը. այժմ ապա թոյնը ոսկորներն կրեն աւերմանցը բնակութեանը կեդրոն կընտրէ, հանդերձ զանոնք ծածկող մաշկովը։ Նախ ոսկորներուն վրայ զանազան դեղեր վիրաց նըշաններ կերեւին. ատոնք մորթն կը ձգտեն և բորբոքեալ ցոյց տան. յաւ մը, որ կարծես թէ ոսկորներն կը ծակէ և կը կրծէ, հիւանդը կսկսի տանջել, վայ թշուառ արարածիդ եթէ անկողնոյ մէջ հանգիստ կը փնտռես. անկողնոյ ջերմութիւնը անպատմելի և աներեւակայելի ցաւոց պատճառ լինի, գիշերն այսպէս նոյնպէս և ցերեկն. ախտաւորին յուսոյ ճրագն նոյն միջոցին կը շիջանի, յուսահատութեան դարն կսկսի։ Վրէժ, վրէժ, կաղաղակէ բնութեանը և դեռ չդադարիր իր թիւնաթաթախ սուրն շողշողացնելէ և թիւնալից նետերն արձակելէ. ոսկորներն կը բորբոքին. քիթին և քմոյ ոսկորներն մանաւանդ կը փտին, կը շարաւին, զանոնք ծածկող մորթն և մաշկը կանհետանայ, ոսկրքը կսկսին փտ-

րիլ, քիթը, մարդկային դիմաց զարդը, կոչը-
չանայ, նորա տեղը խառնչ մը կը գոյանայ. սար-
սաւռ պատճառող խառնչ մ՝է այս, զի քթին
ծայրն միայն մնալով, և ոսկի ալ դէպի վեր
դառնալով, քթին ծակերէն ոյն դժոխային
տեսարանը աչաց կը ներկայանայ. քմաց ոսկոր-
ներն եւս կը փճանան. այն գեղեցկաշէն կա-
մարին տեղը որ քմաց առաստաղն կը կազմէ,

ՊԱՏԿԵՐ Ժ.

Հեշտական մոլութիւնք մարդուս աչքերն, քիթն, շըր-
թունքներն, ոկռոյներն, քիմքն և ականջներն շարաւալից
պալարներով կը ծածկեն և կը հալեցնէ զանոնք։

ծակ ծակ եղած ծածկոյթ մը միայն կը մնայ, ուսկից մարթին կտորներն բերնին մէջ առկախ եալ մնան, նման այն տուներուն առաստաղին որ ամբակոծեալ քաղաքի մը մէջ կը տեսնուի։ Դժբախտը անորոշ, տագնապալի և զզուելի ձայներ միայն կրնայ հանել իր բերնէն, որոնք լոկ իր եղեռնագործութիւնը կը ծանուցանեն։ Կարծես թէ ալ անէծքներու և պատուհասից շղթան աւարտեցաւ. ոչ, ասի յիրաւի խիստ ցաւալի պատասխան մ'է, սակայն ճշմարտութիւն, ահռելի ճշմարտութիւն մ'է։ Ոչ, քնութեան վրէժն դեռ չկատարուեցաւ։ Ա. յա թոյնէն մարմնոյ և ոչ մի մաս զերծ և ազատ մնայ, նա աչաց վրայ կը յարձակի, կուրացնէ զանոնք, ակամէն նեղքին ոսկրեայ ճարտար շինութիւնը շարաւի փոխելով կը մաշեցնէ զայն մարմնոյ ամէն մասն ուռերով կը ծածկէ, շերթունքներն կը հալեցնէ և առամունք անծածկոյթ մնան. առամանց միայն կապարէ. թուշը և մարմնոյ ամբողջ անդամներն կը փտուեցնէ. Ս.ռանգամն և Ս.մարձէք շարաւուելով կապարին և կանհետանան։ Ալ չենք շարունակեր, չըլլայ որ չափազանցութեան թուի, բայց հիւանդանոցներն այ ցերութիւն մ'ըրէ. հոն տեսած աղետալի և պժգալի տեսարաններդ ոչ թէ մեր ըսածներն պիտի վաւերացնեն այլ պիտի խոստովանիս որ ճարակող թշուառութեանց և աղետից տանին մէկը միայն պատմեր ենք հոս։

Ծովային, մեծ և բազմամարդ քաղաքներն

կը վիսան այսպիսի խեղճ էակներով, մանաւանդ հարաւային երկրաց, մանաւորապէս Արեւելեան Հնդկաստանի կղզեաց մէջ, ուր բնիկները ջերմ կլիմայի տակ այն ախտէն զատ նաեւ արեան խառնակութեան եւս տուած են անձերին, դրեթէ ամէն քայլ առնելուդ այսպիսի թշուառներ կը տեսնես որոնց վրայ բնութիւնը իր վրէժխնդրութեան թունաւոր դրոշմը ինքած է զանազան ձեւերով։ Մաշեցուցիչ ախտը մարմնոյ արտաքին մասանցն վրայ գործած աւերմունքներէն զատ նեղքին մտային կենաց ալ դառն փետներ կը հասցնէ. գիտութեան նման նա մարդս յիշողութեան կարողութենէ կը մերկացնէ, կը գրկէ քաջամտութենէ, կը նուազցնէ ախտաւորն, ողնայարն կը փտաէ և ոտքերը կը թուլացնէ։

Սակայն բնութիւնը իր երկայնամտութեամբ յանցաւորը յանկարծ չպատուհասէր, այլ նախ նշաններու միջոցաւ կզգուշացնէ զմարդ. իսկ երբ այն խրատական ազդարարութիւններն ունայն լինին, երբ բնութեան երկայնամտութիւնը անարդուի, յայնժամ պատուհասն ծանրաքայլ և դաղտնի կերպիւ ապրատաբին վրայ կը յարձակի. յայնժամ կըսկսի թոյնը արեան հոսանքին հետ գլորելով մարմնոյ ամէն կողմն շրջագայել և ամէն հատած տեղը մէյմէկ ազատալի յիշատակներ թողուլ։ Պատուհասք համրաքայլ և թաքեալ են. թշնամիին յարձակումն դեռ չէ յայտնի. կատաղի առիւծին ակռաներն դեռ չեն տեսնը-

վիր. սակայն ասոյգ նշաններէն յայտնի կերևի թէ նա անշուշտ պիտի իր որսին վրայ յարձակի։ Շատերը կը ճանչեմք որ տարիներով կարծեցեալ առողջութեան մէջ անհոգաբար և ապահովապէս կեանք կանցնէին և ինքզինքին անպարտելի կերպէին, մէյմալ յանկարծ թշնամին ձայնը զանոնք իրենց քաղցր քունէն արթնցուց. արթնցան և տեսան որ հասասատապէս հաւատացածնին երազ և ցնորք մ'է եղեր. արթնցան, բայց աւա՜ղ խիստուշ. զի թշնամին յարձակելով անոնց վրայ և զանոնք բոլորովին անպատրաստ գտնելով կապեց և կաշկանդեց զանոնք իր շղթաներովն և կորսուեան խորխորատն ձգեց։

Այս տեսակ երազներու մէջ կապրին մանաւանդ այն ախտէն տանջուողք, երբ բժշկական դարմանով արտաքին պայմաններէն կազատին. նոքա ասի տեսնելով կը կարծեն թէ ալ բժշկութեան և բժիշկին խրատներուն անսալն զանց կընեն. մէյ մ'ալ արեան մէջ քնացող թոյնը արթննալով ինքզինքը ազատ երազողը վերսին դերութեան շղթաներով կը կապէ։

Այս ախտին փոխանցութեանը վրայ ալ քանի մը դիտողութիւն հարկաւոր է։ Մաշեցուցիչ ախտին առաջին ստուգանը փոխանցիկ է և նոյն ախտին թոյնը իր մէջ կրող անձի մը հետ զուգաւորուելով կը պատճառի, երկրորդական ստուգանը խիստ քիչ անգամ փոխանցիկ մնի, իսկ երրորդ ստուգանի թոյնը փոշ

խանգիստութեան ամենայն յատկութիւնք իր մէջ կը կրէ։ Ախտին այն աստիճանին մէջ աերբեալ մանկունք դարա թոյնը իբր ահռելի օժիտ իրենց երակաց մէջ կրելով աշխարհ կուգան։ Այո՛, այն աստիճանին թոյնը այն աստիճան վտանգիկ է որ անոր որոն եղողին հետ միևնոյն անօթէ կերակուր կամ ըմպելիք գործածելով, անոր հետ մէկտեղ բնակելով և մի անկողնոյ մէջ պառկելով նոյն թոյնէն պատուաստուելն խիստ դիւրին և հեշտ է։

Թէ մաշեցուցիչ ախտէն տանջուողաց և թէ հանոյն մարդկութեան համար մեծ վնաս մի ալ տակէց կը ծագի որ նոյն ախտէն բռնուողն բժիշկին դիմելու կամաչէ, քանի որ ապօրինի մերձաւորութենէ մ՝եռեւ թոյնէն ազատ մնացողն ոչ թէ միայն չամաչէր այլ մինչև իսկ կը պարծի իր կատարած մեծ գործին վրայ։ Ասոր վրայ կրնաս չափել նեղիկայ դարուս բարոյական վիճակը, ասով կրնաս լաւ իմանալ թէ ամօթխածութիւն կոչուած բանը յիրաւի աշխարհէ բնաջինջ է, եղած։ Ասա՛ղ խեղճ մարդկութեան։ Սակայն զատ ուրիշ կէտ մ՝ալ կայ։ Երբ միևնոյն ճամբուն հետեւողք երկու անձանց թոյնէն մին պատուհասուի, իսկ միւսը ազատ մնայ, մարդիկ դժբաղդը կատեն, կը գարշին և կը հեռանան անկէ, իսկ միւսը ամենեին իբր զազիր յանցաւոր չեն նկատեր։ Ա՛ռ քեզ ուրիշ չափ մ՝ալ այժմեան դարուս բարոյական զգացումն ճանչնալու և իմանալու։ Սակայն բարոյական և կրօնական սկզբ-

բանց տէր եղողը, (որ առանց նոցա մարդս թերի և անկատար արարած մ՚է), լաւ դիտէ որ դժբաղդն առելն, անարգելն, անկէ զզուիլն և դարշիլն, իսկ բաղդաւորն յարգելն ու մեծարելն խիստ մեծ անիրաւութիւն մ՚է։ Երբ եղեռնական առեանն տարուող մարդասպանը հիւանդանոց և հիւանդանոց տարուի միթէ նա ևս այլ անմեղ հիւանդաց նման և հաւասար չ՚դարմանուիր. չէ՞ որ այն հիւանդութեան միջոցին նորա յանցանքը կը մոռցուի, և նորա կեանքն ազատելու համար զանի վարպետ բժիշկի մը կը յանձնուի։ Արդ ի՞նչ պատճառ կայ Մաշեցուցիչ ախտէն տանջուողն անարգելու. նա մարդասպանէ մ՚աւելի դարշելի չէ, ոչ ալ իր ընկերներէն նուաստագոյն որք շատ անգամ անզուն ինչ վրայէն անցան առանց նորա յատակէն դուրս ցցուելու սրածայր ժայռերուն վրայ դահավիժելու։ Ո՞ր սիրտ և ո՞ր բերան կրնայ վճիռ տալ թէ ժայռերէն մահուան խորխորատն դահավիժող դըժբախտ արարածն անարգելու, ատելու և զզուանօք անկէ դարշելու ենք։ Բռնուած աւազակը և վտխածը միևնոյն արժէքն ունին, երկուքն ալ գող են։ Արդ՝ ինչպէս որ դիմաթեան վրայ խօսած առենին քսինք որ նորա ձեռաց մէջ իյնող գերին սիրալիր դարմանի կարօտ է, այլ ևս առաւել Մաշեցուցիչ ախտին հարուածներուն և պատուհասներուն տակ յուսահատեալ անձը կարեկից, մխիթարիչ և սփոփիչ դարմանատարներու կարօտ է։ Բայց

բաբէ, որդին չհամարձակիր իր ցաւն ծնողաց յայտնել. բարեկամը կամաչէ իր արտակցին նկարագրել իր վիճակին դառնութիւնը. այո՛, մինչեւ իսկ կուզեն բժիշկէն այս ուխտն գաղտնի պահել, և կը ջանան խաբէական դեղերով ինքզինքնին բժշկել, կուզեն իրենց մաղերն բռնելով ինկած անդունդէն դուրս քաշել մարմինին. անհնար և յիմարական ջանք. թոյնը կը տարածուի, ախտը կը զայրանայ. երկրորդական և երրորդական տուիճաններն առաջինին կը յաջորդեն։

Ուստի 'ի սէր պահպանութեան կենաց և 'ի սէր ապագայ սերնդոց թող այս ախտն տանջուողն ամեն երեւակայական, փուճ և անտի ամօթխածութիւնը իր մտքէն վանէ, և առանց այլոց առաջարկութեանցն անտարու թող ունձը վարպետ և խոհուն բժիշկի մը յանձնէ։ Ջանա՛ զքեզ թունաւորող վիշապէն ազատել. քանի որ դեռ ժամերն չեն անցած. քանի որ թոյնը արեան բոլոր երակներուն մէջ չէ շրջած և քանի որ ախտը իր աւաջին զարդ և դիւրաբուժելի վիճակին մէջ կը գտնուի։ Իսկ ոնոնք որ այսպիսի հիւանդ մը դարմանելու պարտքն առանցած են թող իրենց պաշտօնը ամենայն կրքակցութեամբ և մարդկութեան վայելուչ խնամով կատարեն, որ չըլլայ թէ աւելի ման հիւանդին իւ ախտին վրայ գաղտնեաց անթափանցելի քօղն տարածելու։

Պարտք համարիմ նաեւ զգուշացնել ամեն

տեսակ պատրաստ ծախուած գեղերէ. որ-
քան քաղցրահնչիւն ալ լինին նոցա անուններ-
ը, որքան հրապուրիչ ազդարարութիւններ
և գովասանքներ ալ այն գաղանի գեղերն գոր-
ծածելու հրաւիրեն, և որքան երեւելի ան-
ձինք ալ զանոնք փորձելու խրատեն, զգու-
շ. զգուշ լեր. անոնք ոնդիկ կը պարունակեն.
ոնդիկ՝ որ այս ախտին թոյնին հետ միանալով
ուրիշ նոր և սարսափելի թոյն մը կը բաղկա-
նայ, և մարդկային մարմինը տեսակ տեսակ
տերմանց կը մատնէ։ Ընտրած հմուտ, խա-
հեմ և կարեկից բժիշկիդ յանձնէ անձդ և
շարունակէ նորա հրամաններն ամենայն ճըշ-
դութեամբ՝ և դարձ դնել, առանց լուծ ձայ-
ներուդ ականջ և հաւատ ընծայելու։ Ոնդի-
կը պատճառ կըլլայ ըրցունքի առատ հոսման.
առատանց միւսը այնքան կուռի որ ասիրակա-
նին քառապատիկը կըլլայ. առատանք թուլա-
նան, խախտին և թափին. բերանը վէրքե-
րով կը լեցուի, սարսափելի և անտանելի
դարշահոտութիւն մը բերնէն կելլէ. առատան-
ը մարդկան կարգութիւնը կը կորուսա-
նէ. մարմինը կը նիհարանայ, կը մաշի և կը-
պառի, մազերը ուժգին լինին և կը թափին.
մարթին տակ արիւն կը հաւաքուի, փտող
վէրքեր, մարթի հիւանդութիւնք և ախտին-
քու փտութիւն միմեանց կը յաջորդեն։ Ամե-
րիկայի մէջ մարդուն մին չափազանց գաղտնի
(Ոնդիկի բաղադրութիւն մ՚է) գործածելով
ախտին փտեցան և այն առիւծան գիւշ

բաբեկ եղան որ օր մը փայտ կտրած ատեն թե. ւը՝ շարժման չ'դիմանալով երկու կտոր եղաւ։

Բոլոր բուսածներէն յայտնի կերեւի որ այս ախտէն ամենքաւոր անկարելի է որ ինքզինքը պարմանէ, ուստի ոչինչ տեղը չենք ուզեր դեզադրեր տնօրինել. սակայն խիստ կարեւոր ընդհանուր կանոններ տալով զանոնք հիւանդին խորին ուշադրութեան կը յանձնենք։

Բացօդեայ տեղեր եղած ատեն հիւանդը զգոյշ լինելու է որ պաղ չառնէ։ Հիւանդին կեցած տեղի ջերմութիւնը միօրինակ և հաւասար պէտք է լինի։

Բժիշկը թոյնը մարմինէն արտաքսելու համար մարմը ջերմութեամբ կը գրգռէ. ուստի այն միջոցին եթէ հիւանդը անխուսափելի պաղ առնէ յօրուածոցում (Ռումատիզմ) կը պատճառի և կամ հիւանդութիւնը մարմնոյ այլ կողմը կը փոխադրի։

Բնական արտաքսումներն, աղքն և մէզն, կանոնաւոր վիճակի մէջ պէտք է պահել. ուստի ուտելեաց և ըմպելեաց շուրջն բժիշկին գծած սահմանէն մ'անցնիր։

Շատ հեղ բայց քիչ քիչ հեղուկ նիւթեր խմելը մեծ օգուտ ունի. սով մէզն քրտինքին հետ գործածելոյ լինի թոյնը արտաքսելու համար։

Ախտաւորին մարմնոյն հետ հոգին և միտքն ալ տանջուելով պէտք է բաբեկամք անոր այցի գանալ մտաց յուզմունքը օգտակար խօսակցութեամբ անդորրութեան վերածեն, որով հիւանդը իր դառն վիճակին վրայ խորհելէ դադրի։

Անխոնջ արտաքին նշաններն բուժուելէն անմիջապէս եռև հիւանդը ինքզինքը կատարելապէս առողջացած տեսնելով չէր լայ որ բժիշկին կանոններն ոտնակոխ ընէ. Թոյնը դեռ ներսն է և եթէ դարմանք չ'շարունակուին վերատին առջի դառն վիճակին կը մատնուի մարդը. ուստի պէտք է սպասել մինչև որ հըմուտ բժիշկ մը աղատութեան փոխն հիւանդին ականջներուն հնչէ։

Պալարներն և ուռեցքներն խիստ զգուշութեամբ պէտք է դարմանել. հոս պէտք է մաքրութիւն. անմաքուր և շարաւոր մասերով աչքերն խառնելով շատերն կուրացած են. ասի միզանցքաբորբոքման համար ալ կարեւոր կանոն մ'է, զի անոր թոյնն ալ աչաց, քթի և ականջաց խիստ վնասակար է։

Վէրքերն և պալարներն դժոխաքարով այրելու չէ, զի այլ կողմերն, մանաւանդ կոկորդին մէջ նոյն տեսակ վէրքեր և պալարներ կելլեն։

Ասոնք լոկ նախազգուշութիւններ են և ախտին շուտով ծաւալելն կարդելուն, սակայն նոքա միայն յայնժամ արդիւնքով կը պակուին երբ խոհուն բժիշկ մը անմիջապէս հիւանդը իր հոգատարութեանը և դարմանարութեան առարկան ընէ։ "Սշնան Տերեւնեռուն" մէջ այսպիսի բժիշկ մը ընթերցողաց ներկայացնելու պատիւն ունեցած էինք, և բերկրութեամբ հոս կը ծանուցանենք որ ամեն անոր դիմողն մեր ըսածներուն ոչ թէ գոլասանք այլ իրողութիւն լինելն փորձով

տեսաւ։ Այժմեան դրքոյկիս նիւթին համար ալ միւնոյն Հայ Ճարտար և կարեկից բժիշկին խօսեցանք և ուրախ ենք ըսելու որ նա խոստացաւ իրեն դիմող ամեն անձը խոհեմութեամբ և կարեկցութեամբ դարմանել, յաւելցուց նաև որ հիւանդութեանց այս ձիւղին իւր մասնաւոր աշխատութիւնը, ուշադրութիւնը և փորձառութիւնը գրուած ալ է։

Վերոյիշեալ Հայ բժիշկը ՏՕՔԹՕՐ ԿԱՐԱՊԵՏ Էֆ. ՎԱՐԴԱՆԵԱՆՆ է, որ կը բնակի Կոստանդնուպոլիս, ԳԱԼԱԹ–ԳԱՓԱՆ, Պատրիարքարանի փողոց, Գեղարանին կից տունը։

Վստահ ենք որ իրեն դիմողներն ամեն մասի նկատմամբ գոհ և շնորհակալ պիտի լինին։

ԳԼՈՒԽ Ը.

ԱՀՈՒԵԼԻ ՆԱՄԱԿ ՄԸ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Բոլոր գլուխը հիւանդ՝ և բոլոր սիրտը մարած է. ոտքին թաթէն մինչև գլուխը ողջ տեղ չմնաց, հարուածներ, վէրքեր և շարաւալից խոցեր կան»։ Եսայի մարգ.

Հետեւեալ նամակը ընթերցողին խորին ուշադրութեանը կը յանձնենք։

«Այսօր քաղաքիս հիւանդանոցը պատուած ատենս բազում աղեստալի տեսարաններ ներկայացան աչացս առջեւ. սակայն նոցա մոտաց վրայ ըրած խորին տպաւորութիւնը բոլորովին ջնջուեցաւ երբ հիւանդանոցը թողեցէս առաջ չէնքին մէկ սենեակը

աչքէ անցուցի։ Տակաւին անդամներս կը դողան երբ հոն տեսած աղետալի եւ աննկարագրելի տեսարանը երեւակայութեանս հորիզոնէն վեր կը բարձրանայ։ այն սարսափելի պատկերը վրաս սարսուռ մը կը բերէ. զզուանք մը, դարշում մը իմ բոլոր սիրտս կը լեցնէ։ Երկու ապառուհիներ սանդուխէն վեր կին մը կը հանէին։ Ախ, ըսաւ զիս Հիւանդանոցին մէջ առաջնորդողը, ասի սքանչելի շքեղութեան տէր կին մ'էր. պատուաւոր անձի մը ամուսինը, որոյ տէրը լիովին կը վայելէր նա։ Անառակ մարդիկ զանի իր էրիկէն մոլորցուցին. նա յայնմ հետէ անառակ կեանք մը վարելը իրեն սովորական զբաղումն ըրաւ որով այս դառն վիճակիս մէջ ինկաւ։ Նա այժմս ամենայն դեղեցկութիւնը կորսնցուցած էր եւ լոկ կմախքի մ'էր փոխուած. շարաւալից վէրքեր եւ պալարներ նորա մարմինը ծածկած էին. նորա սրունքները ապականեալ եւ փտած մարմինը չէին կրնար տանիլ։ Իր գլուխը եւ երեսը լաթով մը ծածկուած էր. երբ առջեւէս կանցնէին զայն՝ լաթը գլխէն վերցուցին։ Ո՜հ, Աստուած իմ, ինչ ահռելի տեսարան աչաց առջին ներկայացաւ. ակռայներս սարսափէս սկսան միմեանց զարնուիլ մարդու գլուխ մը, առանց աչաց, առանց շրթանց, առանց այտերու, առանց քիթի ասոնք ամենն ալ հեշտութեան թոյնը ապառեցուցած, մաշեցուցած եւ փտեցուցած էր։ Ճակատէն մինչեւ թուշը շարաւով եւ գարշահոտ նիւթերով լեցեալ խոռոչի մ'էր փոխուած»։

ընթերցող, ալ չեմ ուզեր վերոյիշեալ նա-
մակին նման սարսափելի իրողութիւններով
զքեզ ահի և դողի մէջ ձգել զի խօսք հա-
կոդին համար մի խրատ բաւ է, իսկ յան-
դուգն սրտին համար հազարն ալ քիչ է։ Սրդ
կաւարտեմ խօսքս, սակայն խնդրեմ կարդա՛
Սուակաց գրքին Է. գլուխն մէջ իմաստասէր
Սրբային ոյն նիւթիս վրայ ասէ 2800 տարի
առաջ գրածը, և բաղդատէ զայն գրքոյկիս
մէջ կարդացածիդ հետ, և եթէ դեռ թըշ-
նամւոյն ձեռքը չես մատնուած, գրքոյկիս մի-
ջոցաւ ծանի՛ր նորա վայրագ կատղութիւնը
և զգոյշ լե՛ր որ նորա որս չըլլաս։ Իսկ եթէ
այն ամէհի գազանը իր ակռայներով զքեզ
թունաւորեր է և թոյնը արեան երակացդ
մէջ արդէն թաւալել սկսած է, յիրաւի խըղ-
ճամ զքեզ. սակայն չըլլայ որ յուսահատիս։
Կենաց Աստուն 'ի ձեռին յարձակէ թշնամ-
ւոյդ վրայ և վստահ լեր որ զանի յերկիր պի-
տի կործանես և կենաց քաղցրութիւնը վե-
րստին վայելես. Յայնժամ անցնի որոտում,
շանթ և կայծակ. փոթորիկն կը խաղաղի, և
ամպերուն մէջէն ճառագայթէ քու վրադ Ար-
փին ոսկեճաճանչ։

ՎԵՐՋ

Տարգմանեալ հրաշալի գրքէն Հայոց
Պերարքայութեան։

مكتبة

«Ազգային գրադարան»
NL0025768
0025768
էջ 6
էջ 1
էջ 2
էջ 3
էջ 4
էջ 5
«Ազգային գրքեր»
NL0025763
0025763
«Ազգային գրքեր»
NL0025764
0025764
«Ազգային գրքեր»
NL0025765
0025765
«Ազգային գրքեր»
NL0025766
0025766
«Ազգային գրքեր»
NL0025767
0025767